# Ազգ
Azg

12 ՄԱՐՏ 2011 ՇԱԲԱԹ 43(4662)

ISSN: 1829-1651


# ԵԱՀԿ. ժամանակը եկել է Հարավային Կովկասի խաղաղության եւ բարգավաճման համար


ԱՈՒԴՐՈՆԻՈՒՍ ԱԺՈՒԲԱԼԻՍ
Լիտվայի արտաքին գործերի նախարար եւ Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) 2011թ. գործող նախագահ


**Եկել է առաջխաղացման ժամանակը: Ժամանակն է Հարավային Կովկասի երկրների համար ազատ արձակելու իրենց ներուժը՝ ի շահ տարածաշրջանի ժողովուրդների բարօրության: Մենք գիտակցում ենք Լեռնային Ղարաբաղի հակամարտության լրջությունը: Վերքը խորն է: Այն արդեն ավելի քան երկու տասնամյակ շարունակ ստվեր է գցում Հարավային Կովկասի վրա՝ խեղդելով հույսը եւ խոչընդոտելով զարգացմանը: Եկել է ժամանակը, որ տարածաշրջանի առաջնորդներն իրենց ջանքերն ուղղեն տարածաշրջանում առկա հզոր մարդկային, ֆինանսական եւ քաղաքական ռեսուրսները փոխշահավետ դրական գործողությունների համար: Դա հեշտ չի լինելու: Սակայն ոչ ոք չի շահի, եթե ներկայիս լճացած եւ կործանարար իրավիճակը պահպանվի:**

**Բոլոր կողմերը համաձայն են, որ հակամարտության խաղաղ կարգավորումից բացի այլընտրանք չկա: Մինսկի խմբի համանախագահների (Ռուսաստան, Ֆրանսիա եւ ԱՄՆ) կողմից ղեկավարվող գործընթացն օգնել է տարիներ շարունակ պահպանել երկխոսություն եւ նվազեցնել լարվածության վտանգը: Սակայն առկա իրավիճակը անկայուն է: Բանակցություններում հետագա առաջընթացի ձախողումը եւ ուղակի թողնելը, որպեսզի իրավիճակը լճանա ու լարվածությունը բորբոքվի, այլեւս թույլատրելի տարբերակներ չեն:**



*Տես էջ 5*

# Աղետալի երկրաշարժ եւ ցունամի Ճապոնիայում



Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյից 373 կմ հյուսիս-արեւելք, օվկիանոսում գտնվող էպիկենտրոնում երեկ առավոտյան տեղի է ունեցել ուժգին ցնցում: ԱՄՆ երկրաբանական ծառայության վերջին տվյալներով, երկրաշարժի մագնիտուդը կազմել է 8,9: Ցնցման հետեւանքով սկսվել է ցունամի, որը հասել է մինչեւ Ֆիլիպիններ եւ Տայվան: Տագնապալի վիճակ է ստեղծվել անգամ Կալիֆոռնիայի ծովեզերյա շրջաններում:

Կիոդո գործակալության տվյալներով, ճապոնական Սենդայ քաղաքի նավահանգստում ալիքների բարձրությունը հասել է 10 մետրի: Տոկիոյում եւ շրջակայքում էլեկտրականությունից զրկվել է առնվազն 4 մլն ընտանիք: Երկրի հեռուստաալիքները ցուցադրում են, թե ջուրն ինչպես է քշում-տանում ավտոմեքենաներ եւ շենքեր: Միագիի եւ Տոկիոյի պրեֆեկտուրաներում կան «բազմաթիվ տուժածներ», ինչպես նաեւ զոհեր եւ անհետ կորածներ:

Պաշտոնական անձանց գնահատումների համաձայն, միայն Տոկիոյում վնասվել է 4 մլն շենք, հրդեհներ են ծագել Տոկիոյում եւ Յոկոհամայում: Երկրաշարժի գոտում ատոմակայանների աշխատանքն ինքնաբերաբար ընդհատվել է, ռադիոակտիվ վարակման վտանգ չկա, տեղեկացնում է ՄԱԳԱՏԷ-ն, թեեւ ատոմակայաններից մեկի հովացման համակարգը խափանվել է: Երկրի արեւելյան ափերին բախված ցունամիի մի քանի ալիքները մեծ վնասներ են պատճառել: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ տեղի է ունեցել նաեւ 6,7 մագնիտուդ ուժգնությամբ մեկ ուրիշ ցնցում: Խոշոր օդանավակայաններից մեկը լիովին ջրածածկ է եղել:

Միագի են ուղարկվել ռազմանավեր: Ֆրանսպրեսի տվյալներով, ցունամիից տուժել է նաեւ Տոկիոյի «Դիսնեյլենդը». ալիքները ծածկել են ավտոկայանատեղը:

Ցունամիի վտանգ է հայտնվել նաեւ Սախալինում եւ Կուրիլյան կղզիներում: ՌԴ իշխանությունները տարհանում են բնակիչներին, իսկ նավերը արտահերթ դուրս են գալիս բաց ծով: Ցունամիի հարվածը զգացվել է նույնիսկ Տայվան կղզում:

Ստորգետնյա ցնցումները կանգնեցրել են տրանսպորտը: Միագիի պրեֆեկտուրայում տեղի է ունեցել գազի արտահոսք, վնասվել են էլեկտրահաղորդման գծեր, ընդհատվել է տեղական ԱԷԿ-ի աշխատանքը: Բազմաթիվ մարդիկ մնացել են ավերված շենքերի փլատակներում: Կան հարյուրավոր զոհեր եւ անհետ կորածներ:

# ԵԱՀԿ նախագահող Աժուբալիսին հրավիրում են Արցախ՝ «լսելու նոր սերնդի ձայնը

Փետրվարի սկզբին ԵԱՀԿ նախագահող, Լիտվայի արտգործնախարար Անդրոնիուս Աժուբալիսը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ մասնավորապես նշեց. «Ղարաբաղյան հակամարտությունը դժվար է լուծել, քանի որ այնտեղ նոր սերունդ է մեծացել»: Այս կապակցությամբ արցախյան երիտասարդական եւ երիտասարդության հետ աշխատող մեկ տասնյակ կազմակերպություններ, ողջունելով Աժուբալիսի հայտարարությունները, կոչ են անում վերջինիս այցելել Արցախ եւ լսել այդ նույն նոր սերնդի ձայնը: Համապատասխան նամակը երեկ հանձնվեց ՀՀ-ում Լիտվայի դեսպանատուն եւ ԵԱՀԿ գրասենյակ: Նամակում արցախյան կազմակերպությունները մասնավորապես ընդգծելով, որ «այսօր մենք ապրում ենք առանց հիմնարար իրավունքների ճանաչման, ինչն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», Ղարաբաղ են հրավիրում ԵԱՀԿ նախագահողին. «Մենք Արցախում ընդունել ենք Չեխիայի, Ռուսաստանի արտգործնախարարներին, Ռուսաստանի առաջին նախագահ Բորիս Ելցինին, Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին: Այս կապակցությամբ մեզ համար մեծ պատիվ կլինի աշխատել ձեր գրասենյակի հետ՝ Ղարաբաղի նոր սերնդի համար զարգացնելով հնարավորություն՝ արտահայտելու իր հույսերը, երազանքներն ու ցանկությունները նրանց, որոնք պարտավորվել են ազդեցություն ունենալ մեր ճակատագրի որոշման վրա»:

Հ. Ա.

# Շվեյցարիայի նախագահը մարտի վերջին կլինի Երեւանում

**Շվեյցարիայի նորանշանակ դեսպանն առաջին ռեզիդենտ դիվանագետն է Երեւանում: Էդվարդ Նալբանդյանը երեկ ընդունել է Հայաստանում Շվեյցարիայի նորանշանակ դեսպան Կոնստանտին Օբոլենսկուն հավատարմագրի պատճենի հանձնման կապակցությամբ:**

**Շնորհավորելով դեսպան Օբոլենսկուն Հայաստանում բարեկամ Շվեյցարիայի առաջին ռեզիդենտ դեսպան նշանակվելու եւ Երեւանում Շվեյցարիայի դեսպանության հիմնադրման կապակցությամբ, Էդվարդ Նալբանդյանը նշել է, որ հայ-շվեյցարական բարեկամությունն ունի երկարամյա պատմություն, հաճախ է խոսվում մեր երկրների միջեւ աշխարհագրական եւ պատմական ընդհանրությունների մասին: «Այսօր գոհունակությամբ կարող ենք արձանագրել, որ երկու երկրների միջեւ վերջին տարիներին հաստատվել են բարձր մակարդակի հարաբերություններ, սերտ քաղաքական երկխոսություն, իսկ Երեւանում դեսպանության հիմնադրումը նոր հնարավորություններ կբացի երկկողմ համագործակցության առավել զարգացման համար», ասել է Հայաստանի արտգործնախարարը:**

**Նախարար Նալբանդյանն ու դեսպան Օբոլենսկին անդրադարձել են ՀՀ նախագահի հրավերով Շվեյցարիայի Համադաշնության նախագահի մարտի վերջին Երեւան կատարելիք պաշտոնական այցելության նախապատրաստական աշխատանքներին, որի ընթացքում պաշտոնապես կբացվի Հայաստանում Շվեյցարիայի դեսպանատունը:**

Ա. Հ.

# Լիտվան ձախողել է Բաքվի պատվերը

Երեւանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան ժամանած Լիտվայի եւ Էստոնիայի քաղաքացիներին արգելվել է մուտք գործել Հայաստանի Հանրապետության տարածք: ՀՀ Ազգային Անվտանգության ծառայությունը «Ինտերֆաքսին» հաղորդել է, որ մուտքի վիզաների արգելքը մեկնաբանվելու ենթակա չէ:

Ինչպես հաղորդել է «Ինտերֆաքսին» օդանավակայանի տեղեկատուն, Էստոնիայի երեք քաղաքացի եւ Լիտվայի մեկ քաղաքացի ներկայացել են որպես լրագրողներ: «Իրենց խոսքերով, նրանք եկել են Հայաստան՝ Կովկասի զինված հակամարտությունների վերաբերյալ վավերագրական ֆիլմ նկարահանելու համար», հայտնեց տեղեկատուն: Մյուս կողմից, ԱԳՆ-ից հայտնում են, որ իրենք չեն զբաղվում մուտքի վիզաներ տրամադրելով:

Միաժամանակ «Ռեգնում» գործակալության աղբյուրները ՀՀ-ի համապատասխան օրգաններում նշում են, որ Անդրեուս Բրոկասի խմբի նպատակը Հայաստանի վարկանիշի նվազեցումն է եւ տեղեկատվական դաշտում ՀՀ-ի շահերի վտանգումը: Բրոկասի խումբը կապված է Ադրբեջանի լավ վարձատրող պաշտոնական կառույցների հետ: Մասնավորապես, լիտվական պրոդյուսերական այս խումբը ժամանակին համաձայնագիր է կնքել Ադրբեջանի մշակույթի նախարարության հետ, ինչի մասին **բազմիցս եւ հրապարակայնորեն խոսվել է լիտվական ԶԼՄ-ներում**:

«Դեռ մեկ ամիս առաջ մենք մանրամասն տեղյակ ենք եղել իրական նպատակներին», համապատասխան աղբյուրները հաղորդել են «Ռեգնումին»: «Բրոկասի խմբի» գալուն նախորդել է այդ խմբի էլեկտրոնային նամակագրությունը Բաքվի պատվիրատուների հետ: «Այս տղաների բախտը մի քիչ չի բերել: Չի բերի բախտը նաեւ այն մարդկանց, ովքեր գալիս են հյուրընկալ եւ բարեկամների առաջ բացսհրտ Հայաստան մուտք մտքերով եւ վատ պլաններով», նշել է գործակալությունը:

# Արաբական խռովությունները տարածման լայն ասպարեզ են գտնում Ադրբեջանում

## *Ապարդյուն են անցնում ընչաքաղց ժողովրդական զանգվածների զայրույթը Ղարաբաղի պատճառաբանությամբ մեղմելու Ալիեւի ջանքերը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

**Թունիսում ծայր առած եւ համաժողովրդական խռովության վերածած հակակառավարական ցույցերը լայն արձագանք գտան նախ Հյուսիսային Աֆրիկայում, ապա տարածվեցին Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներում: Ծավալման գործընթացը դեռեւս շարունակվում է, սպառնալով հատկապես Սաուդյան Արաբիայի միապետական կարգերին: Համենայն դեպս երեկ ուրբաթօրյա նամազից հետո հուժկու ցույցեր էին սպասվում Ռիյադում եւ սաուդական այլ քաղաքներում, որոնք նախապես լուրջ մտավախություն էին պատճառել թագավորական ընտանիքին, ինչպես նաեւ այդ ընտանիքի միջոցով երկիրը վերահսկող պաշտոնական Վաշինգտոնին:**

**Խնդիրը, սակայն, միայն Սաուդյան Արաբիան չէ, այլեւ հարավկովկասյան հանրապետությունները: Մինչ միջազգային շրջանակներում քննարկվում էր արաբական խռովությունների Հարավային Կովկաս ներթափանցելու հարցը, ահա մարտի 11-ը երիտասարդության նախաձեռնությամբ Ադրբեջանում հռչակվում է «Համաժողովրդական մեծ զայրույթի օր»: Մարտի 12-ին մուսաֆաթները, իսկ մարտի 15-ին՝ նախագահի նախկին թեկնածու Հաֆեզ Հաջիեւը, համաժողովրդական հանրահավաք են նշանակում Բաքվում:**

**Թե երեկ ինչ ընթացք են ունեցել բողոքի ցույցերը Ադրբեջանում, չգիտենք: Բայց որ Բաքվի հետ Կիրովաբադի, Սաբիրաբադի, Շիրվանի, Սալիմի, Մասսալու եւ Լենքորանի շրջանները, գյուղերով հանդերձ, վաղուց արդեն ընդվզումների թատերաբեմ են դարձել, իսկ Ադրբեջանում խորհրդարանական վերջին ընտրություններից հետո ընդդիմությունը այլընտրանքային մեջլիս էր ստեղծել, որի մարտի 5-ի վերջին նիստին նախագահել էր ադրբեջանական ժողովրդական ճակատի ղեկավար Ալի Քերիմլին, ակնհայտ է:**

**Նա, բացի գործողությունների ծրագրի հրապարակումից, Իլհամի վարչակարգին էր դիմել այնպիսի պահանջներով, ինչպիսիք են երկրում սոցիալական, հասարակական եւ քաղաքական բարեփոխումների անցկացումը, խորհրդարանական վաղաժամկետ ընտրությունների նշանակումը, կառավարության հրաժարականը, նախարարների եւ մարզպետների ունեցվածքի բացահայտումը, երկրում սոցիալական արդարության ապահովումը, պետական ծառայողների աշխատավարձի կրկնակի բարձրացումը, արհեստականորեն թելադրվող գնաճի կանխարգելումը, քաղբանտարկյալների ազատ արձակումն ու մարդու իրավունքների ու խոսքի ազատության դեմ ոտնձգությունների վերացումը:**

*Տես էջ 2*

# Վտանգավոր դարձած ստորագրություն

Ղարաբաղի եւ Ադրբեջանի շփման գծում հակառակորդի գնդակից հերթական անգամ հայ զինվոր է սպանվել: ԼՂՀ Կուրոպատկինո գյուղի ուղղությամբ տեղակայված մարտական դիրքերից մեկում մարտի 10-ին, ժամը 18:20-ի սահմաններում հակառակորդի արձակած փամփուշտից զոհվել է ԼՂՀ պաշտպանության բանակի ժամկետային զինծառայող, 19-ամյա Արթուր Սամվելի Աղաբաբյանը: ԼՂՀ ՊԲ-ն այս կապակցությամբ հանդես է եկել հայտարարությամբ, որում ասվում է.

«Դատելով վերջին օրերին ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում տեղ գտած հրադադարի ռեժիմի խախտման դեպքերի հաճախականությունից, կարելի է հանգել այն եզրակացության, որ ադրբեջանական կողմը ոչ միայն չի կատարում սույն թվականի մարտի 5-ին Սոչիի եռակողմ հանդիպման ընթացքում ձեռք բերված փոխադարձ վստահության հետագա ամրապնդման պայմանավորվածության պահանջները, այլեւ իր նախահարձակ գործողություններով շարունակում է խորացնել առաջնային գծում տիրող լարվածությունը: Դեռ ավելին, հանդիսանալով հրադադարի ռեժիմի խախտման մշտական նախաձեռնողը (որի պատճառով Սոչիի եռակողմ հանդիպումից ընդամենը ժամեր առաջ Վերին Ջայլուի ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում զոհվեց ՊԲ ժամկետային զինծառայող Գրիգոր Շախկյանը), պաշտոնական Բաքվի քարոզչամիջոցները ճգնում են լկտիաբար ապակողմնորոշել միջազգային հանրության կարծիքը եւ հայկական կողմին ներկայացնել որպես նախահարձակի: Մասնավորապես, սույն թվականի մարտի 8-ին ադրբեջանական լրատվամիջոցների տարածած այն լուրը, թե իբր հայկական ուժերի կողմից սպանվել է Աղդամի Օրթա Քարվենդ գյուղի անչափահաս բնակիչ Ֆարիզ Բադալովը, դրա վառ ապացույցն է: Շեշտենք, որ այս միջադեպի ճշգրիտ մանրամասները պարզելու նպատակով մարտի 10-ին, ԼՂՀ իշխանությունների հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ԵԱՀԿ առաքելությունը նախատեսեց դեպքի վայրում անցկացնել դիտարկում: Սակայն, չգիտես ինչու, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկի առաջարկով Ասկերանի ուղղությամբ իրականացրած դիտարկման ժամանակ, ի տարբերություն ղարաբաղյան կողմի, ադրբեջանական կողմը ԵԱՀԿ առաքելությանը դուրս չի բերել առաջնային գծի նախօրոք փոխհամաձայնեցված կետ, ինչի հետեւանքով դիտարկման խմբերը ստիպված են եղել դիտարկումն իրականացնել ավելի հեռավոր տարածությունից: Այս հանգամանքը մեկ անգամ եւս հաստատում է այն իրողությունը, որ ադրբեջանական կողմը իր այս քայլով հերթական անգամ փորձեց միջադեպի հետ կապված ճշգրիտ մանրամասները թողնել չբացահայտված: Ավելին, դիտարկման օրը ադրբեջանական կողմը ոչ միայն ԵԱՀԿ առաքելության համար հնարավորություն չստեղծեց լիարժեք իրականացնելու առաջադրված խնդիրը, այլեւ առաջնային գծի մյուս բոլոր հատվածներում, իր սովորության համաձայն, բազմաթիվ անգամ խախտեց հրադադարի պահպանման ռեժիմը: Դիտարկումից ընդամենը ժամեր անց, իսկ ավելի կոնկրետ՝ մարտի 10-ին, ժամը 18:20-ի սահմաններում Կուրոպատկինո գյուղի ուղղությամբ տեղակայված մարտական դիրքերից մեկում հակառակորդի փամփուշտից զոհվեց ՊԲ ժամկետային զինծառայող, 1992թ. ծնված Արթուր Սամվելի Աղաբաբյանը: Այս եւ մյուս փաստերը անհերքելիորեն ապացուցում են, որ ի տարբերություն հայկական կողմի, որը հարգում եւ հետեւողականորեն կատարում է մարտի 5-ին Սոչիի եռակողմ հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության պահանջները, Ադրբեջանը շարունակում է իր սադրիչ գործողություններով խոչընդոտել հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին: Այս ամենից ավելիք եզրակացությունը հետեւյալն է՝ կամ ադրբեջանական բանակը անկառավարելի է, կամ էլ իր բոլոր նախահարձակ գործողությունները իրականացնում է վերադասի թելադրանքով: Մնացած հետեւությունները թողնում ենք հակամարտության խաղաղ կարգավորմամբ զբաղվող միջազգային կառույցներին»:

Թերեւս՝ առանց մեկնաբանությունների, միայն հավելենք, որ, փաստորեն Իլհամ Ալիեւը կարող է «պարծենալ» ոչ միայն նրանով, որ «Կովկասի ու ամբողջ աշխարհի ամենադինամիկ զարգացող պետության ղեկավարն է», ոչ միայն «ամբողջ աշխարհի ազերիների նախագահն է», այլեւ, որ ունի աշխարհում ամենավտանգավոր ստորագրություններից մեկը. ամեն անգամ, երբ նա ստորագրում է ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ որեւէ հայտարարություն, հռչակագիր, հայ-ադրբեջանական կամ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում իրականացվում են սադրիչ գործողություններ՝ մարդկային զոհերով: Այնինչ մարդկային կյանքը՝ եւ ոչ միայն սեփական քաղաքացու, պետք է բոլոր հարցերից կարեւորագույնը լինի ամեն մի պետության համար:

Հ. ԱՓՅԱՆ

# Արաբական խռովությունները տարածման լայն ասպարեզ են գտնում Ադրբեջանում

*1-ին էջից*

**Մարտի 5-ի եւ 10-ի համարներում գրելով այս ամենի մասին, թուրքական «Դունիա բուլթենի» կայքէջը Ադրբեջանին համարում է արաբական խռովության տարածման ամենահավանական երկիրը, ապա նշում է, որ այնտեղ շրջանառվող լուրերի համաձայն, մարտի 11-ի հակակառավարական ցույցը համաժողովրդական խռովության վերածելու միտումներ ունի, որոնք լրջորեն մտահոգում են իշխանություններին, այդ իսկ պատճառով էլ վերջիններս իրականացնում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես վերահսկում են Բաքու ելք ու մուտքը, սահմանափակում շրջաններից դեպի մայրաքաղաք ավտոմեքենաների հոսքը, ինչպես նաեւ ինտերնետ-սրճարանների աշխատանքային ժամերը, նոր ձերբակալություններ են իրականացնում ընդդիմության շրջանում, զենք, զորք, զինամթերք են կուտակում Բաքվում, ստեղծելով մայրաքաղաքում ռազմական նոր օբյեկտներ, որոնց թիվը հասել է 30-ի, ազգային անվտանգության ուժերը համալրվում են ժամկետային ծառայողներով եւ վերջապես ռեկտորատները ցույցերից հեռու մնալու նախազգուշացում են անում ուսանողներին, այդ ընթացքում իշխանությունները հայտնում են չարտոնված ցույցերը ցրելու իրենց վճռականությունը, կոռուպցիայի դեմ նույն վճռականությամբ պայքարելու խոստումներով:**

**Հատկանշական է, որ մարտի 10-ին «Ռադիկալ» թերթում «Կտարածվի՞ արաբական կրակը Կովկասում» վերնագրով Ադրբեջանի քաղաքական զարգացումներին է անդրադարձել Ֆեհիմ Թաշթեքինը: Հոդվածը հետաքրքրական է. ունենալով աննշան թերություններ, այնուամենայնիվ հստակ պատկերացում է տալիս Ադրբեջանում իշխանության դեմ ժողովրդական զանգվածներին դեպի խռովություն հրահրող դրդապատճառների, եւ հատկապես երկրում համատարած բնույթ ունեցող այլանդակությունները ղարաբաղյան հիմնահարցի պատճառաբանությամբ կոծկելու նախագահ Ալիեւի ջանքերի անարդյունավետության մասին:**

**Ըստ հոդվածագրի, Ադրբեջանն ու Հայաստանը եռում են, իսկ Հյուսիսային Կովկասում խնդիրը ոչ այնքան հեղաշրջումն է, որքան Ռուսաստանից անկախ գոյատեւությունը, սակայն, վճռական գործողությունների նախապայմանները դեռեւս չեն հասունացել, այդ իսկ պատճառով էլ իրավիճակը Ռուսաստանի գերազդեցության տարածքներում ընդամենը թեթեւակի շիկանում է, որը հատկապես նկատելի է Ադրբեջանում եւ Հայաստանում այն առումով, որ ընդդիմությունն այս երկրներում սկսել է երազել հեղաշրջման մասին:**

**Այնուհետեւ նա շարունակում է. «Այդպիսի փորձ մարտի 1-ին Հայաստանում արեց Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորած ընդդիմությունը, սակայն հանրահավաքի մասնակիցների թիվը 10 հազարով էր սահմանափակվել, այսպիսով ի չիք դարձան հեղաշրջման բոլոր հույսերը: Մարտի 15-ին Տեր-Պետրոսյանը պատրաստվում է նոր փորձ ձեռնարկել: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, թեեւ Բաքվում առայժմ պահպանվում է անդորրը, սակայն շրջանները, որտեղ աղքատությունը ծայրահեղության է հասել, եռում են: Արաբական աշխարհի օրինակով առաջնորդվող ադրբեջանցի երիտասարդությունը մարտի 11-ը հռչակել է «Ժողովրդական զայրույթի օր» եւ դրանով մարտահրավեր է նետել նախագահ Ալիեւին:**

**Հեղինակը միաժամանակ նշում է այդ երիտասարդների՝ Ադրբեջանի տարբեր քաղաքներում դեռեւս փետրվարի սկզբներին իրականացվող ձերբակալությունների մասին, ընդգծում է, թե նրանց «թշնամի Հայաստանի հետ համագործակցության մեջ մեղադրելու համար իշխանական մամուլը հրապարակում է այս երիտասարդների հայ ընկերների ցանկը» կամ դասախոսները վերջիններիս ցույցերից հետ պահելու համար չգտնելով այլ միջոց «եթե ցույցի մասնակցես, ապա վերաքննության կմնաս» ենթատեքստով ինչպիսի նախազգուշացում են անում ուսանողներին:**

**«Մյուս կողմից-, գրում է Թաշթեքինը,- երկրի քաղաքական օրակարգը փոխելու միտումով Ալիեւը վերստին փորձում է շիկացնել Ղարաբաղի հիմնահարցը: Ի դեպ, արաբական խռովությունների սկզբնավորմանը զուգընթաց նա թափ էր հաղորդել կոռուպցիայի դեմ պայքարին: Սակայն կաշառակերությունը նախկին խորհրդային հանրապետությունների ամենախրթին հարցն է: Երթեւեկության մեջ մեքենայի, պետական հիմնարկներում ձեռնարկած գործի ընթացքը ապահովելու, նույնիսկ դպրոցում հաջորդ դասարան փոխադրվելու համար կաշառքը պարտադիր է: Թերեւս դա է պատճառը, որ ադրբեջանցիների մեջ առավել հաճախակի է օգտագործվում «ձուկը գլխից է հոտում» ասացվածքը: Մի՞թե հնարավոր է գլխատել հոտած ձուկը, եթե անձեռնմխելի է մնում Ալիեւների դինաստիայի հեքիաթային հարստությունը: Ահա թե ինչու ընդդիմությունը կոռուպցիայի դեմ ադրբեջանական իշխանությունների հայտարարած պայքարի առնչությամբ ասում է, որ դա ոչ այլ ինչ է, քան գլխավոր կաշառակերի գոյությունը մանր կաշառակերներին կուլ տալու միջոցով ապահովելը»:**

ՄԻՋԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

# Նալբանդյան-ԵՄ դեսպաններ հանդիպում

**Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը երեկ աշխատանքային ճաշի ձեւաչափով հանդիպում է ունեցել Հայաստանում հավատարմագրված Եվրոմիության անդամ երկրների դեսպանների եւ ԵՄ պատվիրակության ղեկավարի հետ:**

**Ըստ ԱԳՆ հաղորդագրության, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը եւ ԵՄ դեսպանները մտքեր են փոխանակել Հայաստան-Եվրոմիություն հարաբերությունների զարգացման եւ համագործակցության գործող ձեւաչափերի շրջանակներում կատարված աշխատանքների մասին, ուրվագծել են ձեռնարկվելիք քայլերը, անդրադարձել Ասոցիացման համաձայնագրի բանակցությունների, մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման, ազատ եւ համապարփակ առեւտրի գոտու ստեղծման գործընթացներին:**

**ԵՄ դեսպանների խնդրանքով նախարար Նալբանդյանը ներկայացրել է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վերջին զարգացումները:**

Ա. Հ.



# Հայաստանը մասնակցում է Բեռլինի զբոսաշրջության միջազգային ցուցահանդեսին

**Մարտի 9-ին Բեռլինում մեկնարկել է զբոսաշրջության միջազգային ամենամյա ցուցահանդեսը (ITB Berlin): Մինչեւ մարտի 13-ը տեւող ցուցահանդեսին, ի թիվս աշխարհի 180 երկրների մասնակցում է նաեւ Հայաստանը՝ զբոսաշրջային 22 կազմակերպություններով: Նախանցյալ տարի ցուցահանդեսին առանձին տաղավարով մասնակցում էր նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այս տարի Ստեփանակերտում նման որոշում չի ընդունվել:**

**Ի դեպ, գերմանալեզու էլեկտրոնային թերթերից մեկը ցուցահանդեսի առիթով Վրաստանի մասին էր գովազդային հոդված հրապարակել:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Բակո Սահակյանի եւ Հիլդա Չոբոյանի հանդիպումը Փարիզում

Փարիզում գտնվող ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը հանդիպում է ունեցել Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի ատենապետուհի Հիլդա Չոբոյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է եվրոպական երկրներում արցախյան հիմնախնդրի ճշմարտացի ներկայացման եւ լուսաբանման հարցը: Ըստ ԼՂՀ նախագահի մամուլի գրասենյակի՝ Բ. Սահակյանը կարեւորել է սփյուռքում համահայկական նշանակության հարցերում հայկական քաղաքական բոլոր ուժերի եւ կազմակերպությունների համախմբման ու հայրենիքի հետ սերտ համագործակցության անհրաժեշտությունը՝ որպես համազգային նպատակների հասնելու միջոցներից մեկը:

# Նոր AutoCard-եր «Արարատբանկից»

«Արարատբանկի» վարչության նախագահ **Աշոտ Օսիպյանը** երեկ հայտարարեց բանկի կողմից նոր Petrol plus համակարգի եւ Visa միջազգային վճարահամակարգի հետ երկակի (Dual) կիրառման քարտի՝ AutoCard-ի ներդրման մասին: Այս նոր համակարգը ավտովառելիքի լիցքավորման կետերի ցանցի եւ համապատասխան կապուղիների վրա հիմնված միասնական ենթակառուցվածք է, որը հնարավորություն է տալիս ավտովառելիքի ձեռքբերման համար ներկայումս կիրառվող կտրոնները փոխարինել պլաստիկ քարտերով:

Ինչպես նշեց Աշոտ Օսիպյանը, AutoCard-ը նորույթ է հայաստանյան շուկայում եւ դրանից օգտվողներին կընձեռի մի շարք առավելություններ: Մասնավորապես, համաձայնեցված ձեւաչափերով եւ հաճախականությամբ բանկի կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրվող հաշվետվությունները հնարավորություն կտան օպերատիվ կերպով վերլուծել, վերահսկել եւ օպտիմալացնել ընկերության ավտոպարկի համար վառելանյութի ձեռքբերման, լիցքավորման, ծախսումների կառավարման գործընթացը, բարելավել հաշվետվական ներքին համակարգը:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Իսկ մենք յուրացրե՞լ ենք երկրաշարժի դասը



Մարտի 11-ին Ճապոնիայում գրանցված հզոր երկրաշարժն ու ցունամին բնականաբար հայտնվել էին աշխարհի լրատվամիջոցների ուշադրության առանցքում: Գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը՝ ARD-ն առավոտյան եթերում ոչ միայն հանգամանալից անդրադառնում էր աղետին, Տոկիոյում գտնվող սեփական թղթակցի հետ հնարավորինս հաճախակի կապ հաստատում, այլեւ իր նախօրոք կազմած ծրագրի հաղորդումները կամ ընդհատում էր՝ աղետի գոտուց նոր լուրեր հաղորդելով կամ՝ վազող տողերով զուգահեռում: Առավել քան զարմանալի է, որ սեյսմիկ Հայաստանի հեռուստաընկերությունները, մասնավորապես Հ1-ը, ոչ միայն օպերատիվ չեն, այլեւ աշխատում էին նախօրոք հաստատված ծրագրից առանց շեղվելու: Առավոտյան եթերում «Երկու աստղ»-ի ուրախ-զվարթ մթնոլորտն էր, ոչ մի խոսք, ոչ մի վազող տող, այս թեմայով բացատրական, նախազգուշական որեւէ հաղորդում արբանյակային կապով չհեռարձակվեց: Այն, որ երկրագնդին անընդհատ մերձեցող լուսինը երկրաշարժ ու ցունամի է առաջ բերել Չինաստանում, Ճապոնիայում, չի նշանակում, որ վտանգը մեզանից հեռու է: 1988-ի երկրաշարժը դեռ չի սպիացել՝ վկան աղետի գոտու այն հազարավոր մարդիկ, որոնք դեռեւս տնակներում են ապրում:

Ըստ գերմանացի թղթակցի, թեպետ Ճապոնիայում օրեր առաջ են սկսվել ցնցումները, բայց գիտնականները այս ուժգնության մասին չեն զգուշացրել կղզու բնակիչներին, անակնկալ է եղել, այդուհանդերձ երկրաշարժի դասերը լավ յուրացրած ճապոնացիները խուճապի չեն մատնվում, գիտեն պաշտպանվել, նույնիսկ երբ բնական աղետն անկանխատեսելի ավերածություններ է գործում՝ ժամ առ ժամ ավելացնելով մարդկային զոհերի թիվը: Բացի այն, որ լրագրությունն առաջին հերթին օպերատիվություն է, ինչը հետին պլան է մղվում տվյալ պարագայում, բացի այն, որ աշխարհը, մեր մոլորակը կառավարվում է ոչ թե քաղաքական այս կամ այն ուժի աչքի թարթումով, այլ նույն լուսնի ու նույն արեւի պտույտի մեջ, մի հարց հետապնդում է շարունակ՝ երկրաշարժի դասը լա՞վ ենք յուրացրել, գիտե՞նք ինչպես պաշտպանվել: Համոզված եմ, որ Հանրայինում աշխատող գործընկերներիցս շատերը, առանց ավելորդ խուճապ հաղորդելու, կկարողանային ու կցանկանային հանրությանը նախ իրազեկել, այնուհետ մասնագետների օգնությամբ ճշգրտել՝ ի՞նչ անել անակնկալ վտանգի պարագայում: Ուրեմն՝ ինչո՞ւ չկա այդ օպերատիվությունը: Դասական երաժշտության, քաղաքական լուրջ բանավեճի պարագայում սովոր ենք լսել՝ ժողովուրդը դրա պահանջը չունի: Այս դեպքո՞ւմ էլ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Նույն ընտանիքի երեխաներին վերջապես միավորեցին

Մի քանի օր առաջ մեր կազմակերպության տարածած դիմում-ուղերձով (տես՝ «Ազգ») ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանին եւ Շիրակի մարզպետ Աշոտ Գիզիրյանին խնդրել էինք Շիրակի մարզի Ղարիբջանյան գյուղի սոցիալապես ծանր պայմաններում հայտնված ընտանիքի երեք երեխաներին Գյումրու տարբեր մանկատներից տեղափոխել նույն՝ «Թռչունյան տուն» մանկատուն, ինչը սահմանված է երեխաների խնամքի եւ պաշտպանություն իրականացնող կազմակերպություններում (անկախ կազմակերպական-իրավական ձեւից) երեխաների տեղավորման մասին ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1735-Ն որոշմամբ:

Դիմում-ուղերձի հրապարակումից երկու օր անց՝ մարտի 10-ին, առաջ քաշված խնդիրը քննարկելու նպատակով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանը հրավիրեց խորհրդակցություն: Դրան մասնակցելու հրավեր էին ստացել Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան գիշերօթիկ, «Թռչունյան տուն» մանկատների տնօրենները եւ «Շիրակ կենտրոնի» ղեկավարը: Խորհրդակցության ընթացքում նախարարը որոշում է կայացրել այդ ընտանիքի երկու դպրոցահասակ երեխաներին Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան գիշերօթիկից տեղափոխել «Թռչունյան տուն» մանկատուն, որտեղ գտնվում է նույն ընտանիքի փոքրը՝ 4-ամյա տղան: Այսօր այդ մասին կտեղեկացվի երեխաների ծնողներին, իսկ տեղափոխման ուղեգրերը պատրաստ կլինեն երկու օրից:

Ավելացնենք, որ «Շիրակ կենտրոնը» վերոհիշյալ դիմում-ուղերձով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանին եւ Շիրակի մարզպետ Աշոտ Գիզիրյանին նաեւ խնդրել էր երեխաների ծնողներին ցուցաբերել նյութական աջակցություն, այդ թվում՝ կիսախարխուլ տան նորոգման, անձնագրային բաժնում եւ սոցիալական ծառայություններում գրանցման, նրանց անվճար բուժզննման ենթարկվելու հարցերում:

Ի տարբերություն ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետը մեր դիմումին չի արձագանքել: Ուզում ենք հավատալ, որ նա իր աշխատակազմի համապատասխան մասնագետների հետ դեռեւս մտորում է այդ ընտանիքին աջակցություն ցուցաբերելու միջոցների հայթայթման ուղիների մասին:

«Շիրակ կենտրոն» ՀԿ
նախագահ
ՎԱՀԱՆ ԹՈՒՄԱՍՅԱՆ
11.03.2011 թ.

# Հայ-ռումինական առեւտրաշրջանառության ծավալները փոքր են իրական հնարավորություններից

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունից, մարտի 10-ին Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում տեղի է ունեցել հայ-ռումինական առեւտրատնտեսական եւ գիտատեխնիկական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 3-րդ նիստը:

Հայկական պատվիրակությունը գլխավորել է հանձնաժողովի համանախագահ, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը, ռումինականը՝ Ռումինիայի տրանսպորտի եւ ենթակառուցվածքների նախարար Անկա Դանիելա Բոաջիուն:

Իր ելույթում Մանուկ Վարդանյանը, դրական համարելով երկու երկրների միջեւ վերջին տարիների առեւտրաշրջանառության որոշակի աճը, նշել է, որ, այնուամենայնիվ, առեւտրաշրջանառության ծավալները բավականին փոքր են իրական հնարավորություններից: Նիստի ընթացքում առաջարկվել է այս տարի Երեւանում եւ Բուխարեստում կազմակերպել գործարար ֆորումներ, ինչպես նաեւ տեղական արտադրանքների տարեկան մասնագիտացված ցուցահանդեսներ: Հատուկ ուշադրություն է դարձվել գյուղատնտեսական ոլորտին, որտեղ առկա են համագործակցության զգալի հնարավորություններ: Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարն առանձնացրել է նաեւ համագործակցության մի քանի այլ ուղղություններ՝ ոսկերչություն եւ ադամանդագործություն, առողջապահություն, զբոսաշրջություն եւ այլն:

Հայ-ռումինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստի շրջանակներում մարտի 10-ին տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանին ընդունել է Ռումինիայի վարչապետ Էմիլ Բոկը:

Հաղորդագրությունից տեղեկանում ենք նաեւ, որ մարտի 11-ին նախատեսվում է Ռումինիայի Առեւտրաարդյունաբերական պալատում կազմակերպել հայ-ռումինական կլոր սեղան՝ «Հայաստանում գործարարության եւ ներդրումների միջավայրի հնարավորությունները» թեմայով, որին ներկա կլինեն ռումինական հայտնի ընկերությունների եւ ձեռնարկությունների մոտ չորս տասնյակ ներկայացուցիչներ: Ա. Մ.

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

# «Իդեալ համակարգ». Ջեռուցում՝ հասանելի բոլորին

Հանդիսանալով ջեռուցման համակարգերի մատակարարման առաջատարն ու քաջ գիտակցելով հայ մարդու առօրյա խնդիրներն ու սոցիալական պատասխանատվությունը «Իդեալ համակարգը» իր առջեւ նպատակ է դրել ապահովել բնակչությանը քաղաքակիրթ, ժամանակակից ջեռուցում եւ տաք ջրամատակարարում՝ միաժամանակ թեթեւացնելով էներգակիրների օրեցօր թանկացման հետ կապված բեռը: «Իդեալ համակարգում» համոզված են, որ յուրաքանչյուր կազմակերպություն եւ հատկապես առաջատար ընկերությունները պետք է ունենան գիտակցված հասարակական պատասխանատվություն, կազմակերպությունները պարտավոր են հոգ տանել այն հասարակության մասին, որտեղ ծավալում են գործունեություն: Հանդիսանալով առաջատար ընկերություն, «Իդեալ համակարգն» էլ իր գործունեությամբ եւ բազմաթիվ ծրագրերով փորձում է օգնել ազգաբնակչությանը՝ թեթեւացնելու հոգսեր ու ապահովելու արժանապատիվ կենցաղային պայմաններ ընտանիքի անդամների համար:

«Ջեռուցումը չպետք է լինի շքեղություն. այն պետք է լինի անվտանգ ու մատչելի»: Սա «Իդեալ համակարգի» մշակած գաղափարախոսությունն է: Հավատարիմ մնալով այս խոսքերին, այսուհետեւ Իդեալ համակարգի որեւէ սրահից ջեռուցման համակարգ ձեռք բերելիս սպառողներին կտրամադրվի 500 $մ^3$ գազ, որը շոշափելի նվեր եւ լուրջ օժանդակություն է: Բնակչության արձագանքներն արդեն ապացուցում են, որ կազմակերպությունն ընտրել է հասարակության հետ երկխոսության արդար ճանապարհը:

Ջեռուցման համակարգի տեղադրման բոլոր աշխատանքները կատարվում են անվճար:

Կազմակերպությունը տարբեր բանկերի ու վարկային կազմակերպությունների հետ մշակել է ապառիկի շատ մատչելի տարբերակներ, որպեսզի առանց որեւէ հոգսի հնարավոր լինի կազմակերպել բնակարանի ջերմության ապահովման խնդիրը նաեւ մաս-մաս: «Իդեալ համակարգի» յուրաքանչյուր հաճախորդ կարող է անվճար օգտվել ջեռուցման համակարգերի չափագրման ծառայությունից: «Իդեալ համակարգում» հոգացել են նաեւ ժամանակի տնօրինման համար: Այցելելով www.idealsystem.am կայքը կարելի է ընտրել ու պատվիրել «Իդեալ համակարգի» առաջարկած բոլոր ծառայություններն առանց տնից կամ աշխատավայրից դուրս գալու:

«Իդեալ համակարգի» բոլոր խանութ-սրահներում գործում է 300.000 դրամ նվեր-գումար ակցիա. հաճախորդներին տրամադրում են պլաստիկ քարտեր 300.000 դրամ գումարով՝ հետագա օգտագործման նպատակով:

«Իդեալ համակարգ»-ից խոստանում են, որ շարունակելու են հայ սպառողին ներկայանալ որակյալ ապրանքատեսակներով եւ ծառայություններով, իսկ բնակչությանը՝ մատուցելու նորանոր անակնկալներ՝ առաջարկելով խնայողության նոր բանաձեւեր՝ վերանորոգումը դարձնելով հաճելի ու ստեղծագործ գործընթաց:

Հ. Հ.

# «Սպանդ» կազմակերպելու ստորագրահավաք

## *Եկեղեցին հերքում է, կազմակերպությունները պնդում են*

Կենդանիների հիմնախնդիրներով զբաղվող «Փրկենք կենդանիներին», «ԴավՕս ստուդիո», «Փրո Փոուզ» հասարակական կազմակերպությունները երեկ հայտարարություն էին տարածել՝ մեղադրելով Աշտարակի շրջանի Մուղնի գյուղի Ս. Գեւորգ եկեղեցու մոմավաճառին շների ոչնչացման նպատակով եկեղեցում ստորագրահավաք կազմակերպելու մեջ: «Հավանաբար այս բարբարոս եւ անբարո գործունեությունը հավանության է արժանացել եկեղեցու հոգեւորականներից, քանի որ նրանցից ոչ ոք ոչ միայն չի փորձել պատժել տմարդության համար, այլեւ չի բարեհաճել առնվազն արգելել նման անօրեն դրսեւորումը: Ադրբեջանն արդեն կենդանիների նկատմամբ դաժանություն արգելող օրենք է ընդունել, իսկ մենք՝ առաջին քրիստոնյաներս, եկեղեցում սպանդի գաղափարներ ենք տարածում», գրված է հայտարարության մեջ:

Հասարակական վերոնշյալ կազմակերպությունները նման իրավիճակի պատասխանատվության համար առաջին հերթին մեղադրում են Հայ առաքելական եկեղեցուն եւ մասնավորապես Արագածոտնի թեմին ու հոգեւորականներին, ովքեր, թույլ են տվել, որ նման գործունեություն ծավալվի եկեղեցում: Նրանք պահանջում են միջոցներ ձեռնարկել, որ Մուղնու Ս. Գեւորգ եկեղեցում դադարեցվի շների ոչնչացման նկատմամբ ապօրինի գործողությունը, իսկ կազմակերպիչներին պատասխանատվության կանչեն՝ հետագայում նման իրավիճակ բացառելու համար:

«**Ազգ**»-ին ուղարկված հաղորդագրության մեջ Արագածոտնի թեմի դիվանը հերքում է հասարակական կազմակերպությունների տարածած հաղորդագրությունը: «Հայ առաքելական եկեղեցին եւ Արագածոտնի թեմը ոչ մի առնչություն չունեն հիշյալ ստորագրահավաքին, այլեւ անընդունելի են նկատում Աստծո արարչագործության դեմ որեւէ նման արարք», ասված է հերքման տեքստում: Հ. Հ.

# Ցավակցություն

Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության հայաստանյան մասնաճյուղի աշխատակազմը խորապես ցավակցում է Միեր Շահգելդյանին զոքանչի՝

**Ֆլորա Ավետիսյանի**

մահվան կապակցությամբ:

Ավանդությունը պատմում է, որ ասեղնաբուժության ֆենոմենալ հատկանիշները հայտնաբերել է մի չինացի երկրագործ: Նա պատահաբար բրիչով հարվածել է իր ոտքին, որից հետո նրան տանջող գլխացավն անմիջապես անցել է: Ասեղնաբույժ **Ալեքսանդրա Սագինյանն** ավանդությունն առանձնապես լուրջ չի ընդունում, ասում է, որ առ այսօր ստույգ պարզ չէ՝ ինչպես է հայտնաբերվել ասեղնաբուժությունը: Սակայն բժշկուհի Սագինյանը համոզված է՝ այսպես թե այնպես ասեղնաբուժության հայրենիքը Չինաստանն է: Դեռեւս դարեր առաջ Չինաստանում հասկացել են, որ ամեն մի հիվանդություն իգական հիմքի՝ **ին** էներգիայի եւ արական հիմքի՝ **յանի** հավասարակշռության խախտման հետեւանքն է: Ալեքսանդրա Սագինյանն ասում է, որ բացի ֆիզիկական մարմնից, մարդն ունի նաեւ էներգետիկ մարմին.«Կարգավորելով մարդու էներգետիկ համակարգը՝ կարգավորում ենք նաեւ ֆիզիկական մարմինը»: Գոյություն ունեն ասեղնաբուժության տարբեր ճյուղեր՝ ճապոնական, չինական, կորեական: Սրանք տարբերվում են իրարից, բայց ունեն ընդհանուր գծեր, ինչը միանգամայն հասկանալի է, քանի որ ասեղնաբուժության բոլոր ճյուղերի հիմքում չինական փիլիսոփայությունն է»:



# Ասեղնաբուժության ֆենոմենը

Վերջերս Հայաստանում ասեղնաբուժությունը սկսել են ավելի շատ կիրառել: Սակայն խորհրդային տարիներին այստեղ ասեղնաբուժության մասին գիտելիքներ ու ինֆորմացիա ստանալը դժվար գործ էր: Ալեքսանդրա Սագինյանը պատմում է, որ ասեղնաբույժի մասնագիտացում ստանալու համար բժիշկները պետք է գնային Մոսկվա կամ Կիեւ: Հիմա ասեղնաբուժություն հնարավոր է սովորել նաեւ Հայաստանում: «Թեեւ մեր երկրում ասեղնաբուժությունը պաշտոնապես ընդունված բուժման մեթոդ է, բայց մեզանում համարվում է բժշկության ոչ ավանդական մեթոդ», ավելացնում է բժշկուհի Սագինյանը:

Սկզբունքորեն, բոլոր հիվանդությունների ժամանակ էլ, ըստ բժշկուհու, կարելի է կիրառել ասեղնաբուժությունը՝ թե՛ առանձին, թե՛ դեղորայքային կամ վիրահատական բուժմանը զուգահեռ: Ասեղնաբուժությունը քիչ դեպքերում է հակացուցված: «Կոնկրետ մեր երկրում հակացուցված է չարորակ ուռուցք ունեցողներին, թեեւ Չինաստանում կան օնկոլոգիական հիվանդանոցներ, որտեղ ուռուցքային հիվանդություն ունեցողներին բուժում են հենց ասեղնաբուժությամբ: Մեր ասեղնաբույժները չեն աշխատում նաեւ ինֆեկցիոն եւ վիրահատության կարիք ունեցող հիվանդների հետ», տեղեկացնում է Ալեքսանդրա Սագինյանը եւ հավելում. «Նաեւ չենք աշխատում մինչեւ 3 տարեկան երեխաների եւ մոտավորապես ութսունն անց մեծահասակների հետ»: Ասեղնաբուժության կուրս կարող են ընդունել եւ առողջ մարդիկ՝ զուտ պրոֆիլակտիկայի համար: Այդուհանդերձ, Ալեքսանդրա Սագինյանն ասում է, որ իրեն դիմում են տարբեր գանգատներով, բայց ավելի շատ՝ նեւրոզ, ողնաշարային հիվանդություններ ու գինեկոլոգիական խնդիրներ ունեցողները:

23-ամյա օրիորդը, որը չուզեց իր անվան հրապարակումը, նեւրոզից բուժվել է ասեղնաբուժությամբ ու հոգեթերապիայով: Մինչ այդ սեանսներին գնալը տարբեր դեղեր է խմել՝ ընդհուպ ներարկվել, բայց դրանք որեւէ օգուտ չեն տվել: Պատմում է, որ համարյա մի տարի նեւրոզի պատճառով անքնություն ու գլխացավեր է ունեցել: Դիմել է տարբեր բժիշկների, նրանք չեն հասկացել, որ աղջիկը նեւրոզ է ունեցել, չհասկանալով հանդերձ՝ դեղեր են նշանակել: Մի տարի շարունակ մի հիվանդանոցից մյուսը գնալով ու տարբեր դեղեր խմելով՝ զրուցակիցս, սակայն, չի բուժվել: Այնուհետեւ բարեկամի խորհրդով գնացել է նեւրոզների կլինիկա, որտեղ ոչ թե դեղերի, այլ ասեղնաբուժության ու հոգեթերապիայի սեանսների միջոցով վերջապես բուժվել է: «Հիմա գլխացավեր չունեմ, գիշերները նորմալ քնում եմ: Առաջվա նման ցրված չեմ ու կարողանում եմ նորմալ պարապել դասերս», ասում է զրուցակիցս:

Ալեքսանդրա Սագինյանն ընդգծում է, որ ասեղնաբուժության նպատակը ոչ միայն ախտանիշը վերացնելն է, այլեւ հիվանդությունը բուժելը. «Բայց եթե գալիս է հիվանդ, որը ցավեր ունի, ապա պետք է սկզբում ցավը վերացնել, հետո նոր անցնել բուժմանը»: Բժշկուհին մեկ այլ հանգամանք եւս կարեւորում է. «Ըստ չինական գրականության՝ ամենալավ ասեղնաբույժը բուժում է մի կետով ու մի ասեղով»: Իսկ հայերը մտածում են՝ ինչքան շատ դնեն ասեղները, այնքան արդյունավետ կլինի բուժումը: «Իհարկե, այդպես մտածելը սխալ է. ասեղնաբուժության մեջ չկա նման բան: Երբեմն քիչ ասեղներ դնելու պատճառով նեղանում են ինձնից, ասում են՝ ախր ձեռքս է ցավում, ինչո՞ւ ես ոտքիս դնում», պատմում է բժշկուհի Սագինյանը եւ բացատրում. «Ասեղնաբույժն ինքը պետք է որոշի, թե տվյալ պահին ո՞ր կետի վրա ինչպիսի՞ ասեղ դնի»: Մարմնի վրա կան հարյուրհազարավոր կետեր, որոնց միջոցով էլ բուժում են հիվանդությունները: Նաեւ կան տարբեր տեսակի ասեղներ՝ ոսկյա, պղնձե, արծաթե:

Ալեքսանդրա Սագինյանի մոտ ասեղնաբուժության ամեն մի սեանսն արժե 3500 դրամ, իսկ խորհրդատվությունն անվճար է:

### Վստահել ասեղնաբույժի՞ն, թե՞ ասեղնաբուժությանը

Մեզանում երբ հիվանդը գնում է ատամնաբույժի կամ սրտաբանի մոտ ու նրանցից օգուտ չի ստանում, երբեք չի ասում, թե սրտաբանությունը կամ ատամնաբուժությունը սուտ բաներ են, դժգոհում է մասնագետից ու փնտրում ավելի լավին: «Իսկ ասեղնաբույժից օգուտ չստանալու դեպքում հաճախ հիվանդներն ասում են՝ ասեղնաբուժությունը սուտ բան է, բայց չեն ասում՝ միգուցե ասեղնաբույժը լավը չէր: Պարզապես շատերը չգիտեն, թե իրականում ինչ է ասեղնաբուժությունը», ասում է Ալեքսանդրա Սագինյանը:

Հայերս նաեւ հետեւյալ մոտեցումն ունենք՝ երբեմն վստահում ենք ոչ թե տեղացի, այլ օտարազգի բժիշկներին: Իհարկե, նման վերաբերմունքը պատահաբար չի ձեւավորվել եւ իր հիմնավորումներն ունի, բայց դա արդեն այլ հարց է եւ այլ թեմա: Երեւի թե այդ վերաբերմունքով է պայմանավորված, որ չինացի ասեղնաբույժ Շուի Լյաոյի դռան մոտ գրեթե ամեն օր հիվանդների հերթ է գոյանում: Շուին եկել է Չինաստանից, աշխատում է «Էրեբունի» բժշկական կենտրոնում:

Տիկին **Հասմիկը** 3 տարի առաջ Շուիի մոտ բուժման է գնացել: Տիկին Հասմիկը ողնաշարի ճողվածք ունի, ինչի պատճառով 3 տարի առաջ ուժեղ ցավեր ու կողմնակի բարդություններ է ունեցել: Դիմել է Շուիին, սակայն նրա բուժումից դժգոհ է մնացել: «3 ամիս շարունակ գրեթե ամեն օր Շուիի մոտ ասեղնաբուժության սեանսների էի գնում, բայց նա ինձ օգուտ չտվեց», պատմում է տիկին Հասմիկը: Այնուհետեւ զրուցակիցս դիմել է մեկ այլ ասեղնաբույժի, եւ նրա մոտ եւս բուժման է գնացել: Ասում է, որ նոր



բժշկից շատ գոհ է. անգամ առաջին 3 սեանսից հետո իրեն ավելի լավ է զգացել: Սակայն այդ բժշկի մոտ բուժման մի կուրսը տեւում է ոչ թե 50 կամ 60 օր (ինչպես Շուիի մոտ), այլ ընդամենը 10-15 օր:

«Մի կուրս բուժելուց հետո ընդմիջում ենք անում, հետո նոր որոշում ենք՝ արժե՞ շարունակել բուժումը, թե՞ ոչ: Ամիսներ շարունակ ասեղնաբույժի մոտ անընդմեջ բուժվելն անիմաստ է, բացի դրանից՝ նաեւ չի կարելի, որովհետեւ օրգանիզմը հյուծվում է. չէ՞ որ մենք աշխատում ենք էներգետիկ համակարգի հետ», ասում է բժշկուհի Սագինյանը եւ բացատրում. «Ասեղնաբույժը կարգավորում է էներգետիկ համակարգը ու հանգիստ թողնում հիվանդին: Օրգանիզմը հետո ինքն իրեն արդեն ոտքի կկանգնի: Ընդունված է, որ բուժման մի կուրսը պետք է տեւի միջինը 10-15 օր, սակայն ոչ ավելի»:

Տիկին Հասմիկը նաեւ դեղեր է խմել, իհարկե, ոչ ասեղնաբույժների խորհրդով: Պատմում է, որ դեղերը ոչ միայն չեն բուժել իրեն, այլեւ վնասել են. «Դեղորայքից ստամոքսի բորբոքում՝ գաստրիտ առաջացավ: Եթե անգամ դեղորայքն օգնում է մի օրգանին, ապա մյուսին վնասում է»: Կան մարդիկ, որոնք խուսափում են դեղեր խմելուց ու գերադասում են բուժվել ասեղնաբուժությամբ: Ինչեւէ, տիկին Հասմիկը ասեղնաբուժությունից չի դժգոհում, պարզապես ամեն ասեղնաբույժի չի վստահում:

Գրող, արվեստաբան **Սերգեյ Գալստյանը** բուժման համար եւս դիմել է Շուի Լյաոյին: Ի տարբերություն տիկին Հասմիկի՝ Սերգեյ Գալստյանը Շուիից շատ գոհ է: Ասում է, որ ողնաշարի ճողվածք է ունեցել, եւ Շուին կարողացել է բուժել իրեն: «Անտանելի ցավեր եմ ունեցել, անգամ պառկել անկողնում: 2001-ի Նոր տարին անկողնում եմ դիմավորել: Արդեն պատրաստվում էի գնալ վիրահատության, երբ խորհուրդ տվեցին դիմել Շուիին: Շատ վատ էի զգում ինձ, նույնիսկ չէի կարող հիվանդանոց գնալ: Ամեն օր Շուին ինքն էր գալիս մեր տուն», պատմում է Սերգեյ Գալստյանը: 1,5-2 ամսում Շուին բուժել է պարոն Գալստյանին: «Նրա բուժումից 10 տարի է անցել, ու հիմա ինձ լավ եմ զգում», հավելում է զրուցակիցս: Շուին նրան բուժել է չինական ժողովրդական բժշկությամբ, որի մեջ մտնում է ինչպես ասեղնաբուժությունը, այնպես էլ կոմպլեքս բուժման մյուս բաղադրիչները՝ մերսում, բանկաների տեղադրում եւ այլն:

Շուիի բուժման մասին այսպիսի իրարամերժ կարծիքներ լսելուց հետո որոշեցի հարցազրույց վերցնել նրանից, սակայն Շուին մերժեց մեզ: Նրա օգնականը տեղեկացրեց, որ Շուին հարցազրույց տալու ցանկություն չունի: Սակայն հետաքրքրությունից դրդված՝ գնացի «Էրեբունի» բժշկական կենտրոն: Իհարկե, Շուիին տեսնել չկարողացա, քանի որ դռան մոտ հիվանդների հերթն էր սպասում: Հիվանդանոցում մի կնոջ հետ խոսեցի, որի ամուսինը մտել էր սեանսի: Նրանք Էջմիածնից էին եկել: Կնոջ խոսքով՝ ամուսինը ողնաշարի ճողվածք ունի: «10 օր է, ինչ գալիս ենք, ամուսինս ասելով՝ բուժումն արդեն օգնում է, իրեն ավելի լավ է զգում» , պատմեց զրուցակիցս: Շուիի մոտ բուժման են գալիս նույնիսկ հեռավոր գյուղերից: Իսկ ավելի մոտ մարզերում ապրողներն օրական 2 երթուղային տաքսի են փոխում, որպեսզի հասնեն հիվանդանոց:

Պարզվում է՝ Շուիի յուրաքանչյուր սեանսն արժե 5000 դրամ, իսկ խորհրդատվությունը՝ 10 հազար դրամ: Հաշվի առնելով այս թվերն ու հիվանդների հերթերը՝ կարող ենք մոտավորապես պատկերացնել, թե Շուիի մոտ ինչ է կատարվում:

Մեր երկրում ասեղնաբուժությունը համարում են էկզոտիկ ու էլիտար բժշկություն՝ հասանելի ոչ բոլորին: Ասեղնաբուժությունն ամենեւին էլ սուտ բան չէ, սա բժշկություն է, որի շնորհիվ մարդիկ ոտքի են կանգնում, ազատվում հիվանդություններից: Տարբեր երկրներում ասեղնաբուժությունը շարունակում է հրաշքներ գործել, միաժամանակ առաջ բերում եւ հակասական կարծիքներ: Իսկ Հայաստանում չինական փիլիսոփայությունն ու ասեղնաբուժությունը շատերի համար մնում են դեռ խորթ ու անհասկանալի:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Երիտասարդ կենսաբանները միացել են ուղեղի ճանաչման գլոբալ արշավին

«Երիտասարդ կենսաբանների ասոցիացիան» այստեղ գործող երիտասարդական կազմակերպությունների մեջ աչքի է ընկնում իր ակտիվությամբ: Վերջերս նրանք դասախոսությունների շարք էին կազմակերպել ժամանակակից գենետիկայի եւ գենոմային անկայունության վերաբերյալ: Այդ թեմաներով Երեւանում դասախոսություններ կարդացին տարբեր երկրների հայտնի գիտնականները: **«Ազգը»** այդ մասին գրել է փետրվարի 24-ի համարում: «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիան» նախաձեռնել է հետաքրքրական մեկ այլ միջոցառում: Մարտի 14-20-ին «Ճանաչիր քո ուղեղը» խորագրով երիտասարդական մրցույթ է անցկացնում: Մրցույթի վերաբերյալ «**Ազգը**» զրուցեց ՀԿ-ի նախագահի՝ **Արսեն Գասպարյանի** հետ: Նրա փոխանցմամբ՝ տարբեր երկրներում մարտի 14-20-ը «Ուղեղի ճանաչման շաբաթ» է անցկացվում, որին մասնակցում են շուրջ 2800 կազմակերպություններ եւ բուհեր 82 երկրից: Հայաստանից «Ուղեղի ճանաչման շաբաթին» միացել են երիտասարդ կենսաբանները: Արսեն Գասպարյանն ասում է՝ 82 երկրներում տարբեր միջոցառումներ են լինելու՝ թատերական ներկայացումներ, ցուցահանդեսներ, սեմինարներ: Դրանց նպատակը ուղեղի, նյարդային հիվանդությունների ու դրանց բուժման եղանակների մասին ինֆորմացիան հասարակությանը մատչելի ձեւով ներկայացնելն է: «Այդ շրջանակում մենք էլ «Ճանաչիր քո ուղեղը» մրցույթն ենք անցկացնում, որին անկախ մասնագիտությունից կարող են մասնակցել մինչեւ 35 տարեկան երիտասարդները», ասում է զրուցակիցս: Մասնակցել ցանկացողները մանրամասներին ու պայմաններին կարող են ծանոթանալ yba. am կայքից, որտեղ տեղադրված է նաեւ ուղեղի ու նեյրոդեգեներատիվ հիվանդությունների մասին համապատասխան հարցաթերթիկը: «Մեր կայքում նաեւ տեղադրել ենք ինֆորմացիա այդ հիվանդությունների մասին», նշում է Արսեն Գասպարյանը եւ բացատրում, որ նեյրոդեգեներատիվ հիվանդությունների ժամանակ խաթարվում է նյարդային բջիջների ֆունկցիան. «Դրանցից են օրինակ՝ Պարկինսոնի ու Ալցհեյմերի հիվանդությունները»: Մրցույթը կազմակերպելու համար դրամաշնորհ տրամադրել են «Դանա» հիմնադրամն ու «Եվրոպական նյարդաբանական միությունների ֆեդերացիան», նաեւ մրցանակներ են լինելու: «Սակայն ոչ գումարի տեսքով», հավելում Ա. Գասպարյանը:

Ավելի քան 10 տարի աշխարհում անցկացվում է «Ուղեղի ճանաչման շաբաթը»: «Բայց ինչքանով տեղյակ ենք՝ այս տարի առաջին անգամ է Հայաստանը միանում գլոբալ արշավին», հավելեց Արսեն Գասպարյանը:

**Ի. Պ.**

# Ադրբեջանի «սիրելի հյուրը» կամ բրիտանացի «ազգի խայտառակությունը»

Մարտի 2-ին բրիտանական BBC News Business կայքը հրապարակեց մի հոդված «Բոլորն ուզում են ընկերանալ Ադրբեջանի հետ» վերնագրով: Հոդվածը սկսվում է հետեւյալ նախադասությամբ. «Կասպից ծովին ափամերձ այդ ոչ մեծ երկրում վառելիքի պաշարները երբեք չեն սպառվի: Սա իրավի մի ազգ է, որը կարող է հպարտանալ իր նավթարդյունաբերությամբ»: Այնուհետեւ բրիտանացի հոդվածագիրը բավական մանրամասնորեն, միեւնույն ժամանակ՝ միայն դրականորեն նկարագրում է Ադրբեջանի «նավթոպրոմը», վստահություն հայտնում, որ «շուտով սրանից է կախված լինելու ամբողջ Եվրոպայի էներգետիկ անվտանգությունը», հիանում է «ծովի ափին կառուցվող «Մարիոթ», «Հիլթոն» եւ այլ հյուրանոցներով, մի շարք հարցազրույցներ է անում Ադրբեջանի էներգետիկ, նավթագազային ոլորտի պաշտոնյաների, մասնագետների հետ եւ եզրակացնում. «Ադրբեջանն այսօր լրջորեն նախապատրաստվում է վերածվելու աշխարհի խոշորագույն էներգետիկ մատակարարի, ինչպես նաեւ դառնալու կենսական նշանակություն ունեցող էներգետիկ տարանցիկ երկիր»: Մենք թերեւս չանդրադառնայինք բրիտանացի լրագրողի այս հոդվածին, մանավանդ լավ իմանալով, որ Լոնդոնում Ադրբեջանը «հզորագույն» կապեր ունի, եթե չլիներ... բուն Բրիտանիայում դժգոհություն՝ կապված արքայազն, Յորքի դուքս Էնդրյուի հետ: Թագուհի Էլիզաբեթի կրտսեր որդին՝ 51-ամյա Էնդրյուն նաեւ Պահպանողական կուսակցության պատգամավոր է, արտաքին առեւտրի գծով Մեծ Բրիտանիայի հատուկ ներկայացուցիչ: Ինչպես տեղեկանում ենք «Ազատություն» ռադիոկայանից, որն իր հերթին մեջբերում է բրիտանական «Գարդիան»-ից, այս օրերին Միացյալ Թագավորությունում ընդդիմությունը եւ լրատվամիջոցները քննադատության թիրախ են դարձրել արքայազնին, քանի որ վերջինս «ջերմ կապեր ունի Ալիեւների հետ եւ հաճախ է այցելում Իլհամ Ալիեւի՝ Լոնդոնում բնակվող դստերը՝ Արզուին»: Բրիտանական պարբերականը վկայում է, որ Էնդրյուն «գործնական ու մտերիմ կապերով կապված է Միջին Արեւելքի միապետների ու ղեկավարների հետ, որոնցից շատերը, մեղմ ասած, բարի համբավ չունեն»: Փաստորեն «Գարդիանը» Իլհամ Ալիեւին նույնպես համարում է «Միջին Արեւելքի բարի համբավ չունեցող միապետ կամ ղեկավար»:

Բրիտանական ընդդիմության եւ լրատվամիջոցների համար այս ամենի պատճառը եղել է անցած երկուշաբթի Էնդրյուի ունեցած հանդիպումը բրիտանական խորհրդարանում Ադրբեջանի խմբի ղեկավարի հետ: Հանդիպման ընթացքում, արքայազնը ասել է. «Ադրբեջանը մեծ հեռանկարային դաշտ է, եւ եթե բրիտանացի քաղաքական գործիչներն ու գործարարները ակտիվացնեն կապերն այնտեղի գործընկերների հետ, նյութական մեծ օգուտ կունենան»: Էնդրյուն առաջարկել է պատգամավորական խմբի ղեկավարին՝ «օժանդակել իրեն Ադրբեջանի հետ Բրիտանիայի գործնական կապերը խորացնելու գործում»: Այս հայտարարության հետ կապված, նույն օրը՝ մարտի 7-ին հանդես եկավ Բրիտանիայի առեւտրի նախարար Վինս Քեյբլը, որը հայտարարեց, թե «արքայազն Էնդրյուի գործունեությունը կվերագնահատվի ու նրա հարցը կքննարկվի»: Սակայն երկրի վարչապետի խոսնակը նախարարի հայտարարությունը հերքեց՝ ասելով. «Կառավարությունը բարձր է գնահատում արքայազնի ներդրումը Մեծ Բրիտանիայի արտաքին առեւտրային կապերի ամրացման հարցում»: Ի դեպ, հունիսի 8-ին արքայազնը պատրաստվում է այցելել «սիրելի» Ադրբեջան, որտեղ լրատվության որոշ միջոցներ, ներկայացնելով դուքսի գալիք այցը, անվանում են նրան «Ադրբեջանի սիրելի հյուր»: Հարեւան երկրի, որտեղ բավական պատվարժան մարդկանց զուտ ԼՂՀ այցելելու համար ներառում են «սեւ ցուցակում», «սիրելի հյուրը» բրիտանական ընդդիմադիր Աշխատավորական կուսակցության պատգամավոր Քրիս Բրայանթի կարծիքով «բրիտանացի ազգի խայտառակությունն է»: Բանն այն է, որ Բրիտանիայում արքայազն Էնդրյուն կասկածվում է «անչափահասների հետ սեռական կապ ունենալու մեջ»:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ՉԻ ԿՐԿՆՈՒՄ ԱԶԵՐԻՆԵՐԻ ՍՈՒՏԸ

# ԵԱՀԿ Բաքվի գրասենյակ. «Չեմ պատասխանի այդ հարցին»

**ԵԱՀԿ Բաքվի գրասենյակի ղեկավար Բիլգե Ջանկորելը, փաստացի, միակ դիվանագետն է, որ ոչ միայն չի հետեւել, ասենք, ամերիկացի իր գործընկերներին, այլեւ ըստ արժանվույն է արձագանքել ադրբեջանական լրատվամիջոցների փորձերին՝ հերթական հարցադրման առնչությամբ: Խոսքը ադրբեջանական կողմի այն տեղեկության մասին է, թե հայ դիպուկահարի կրակոցից 9-ամյա երեխա է սպանվել:**

**Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ Ջանկորելը հրաժարվել է որեւէ կերպ մեկնաբանել այդ տեղեկությունը, ընդգծելով, որ ինքը չի պատասխանի այդ հարցին, քանի որ դա «բացարձակապես այլ թեմա է»:**

**Սրա կողքին, ադրբեջանական լրատվական գործակալությունները, որոշակի ստանդարտների հետեւելով, հավելում են, որ հարցադրումը վերաբերել է 9-ամյա Ֆարիզ Բադալովի մահվանը, ըստ որում, դեպքը տեղի է ունեցել մարտի 8-ին, երբ վիրավոր երեխային հասցրել են հիվանդանոց, սակայն նրա կյանքը փրկել չի հաջողվել:**

**«Ազգը» մարտի 11-ի համարում մանրամասն տեղեկություններ է ներկայացրել այս դեպքի առնչությամբ առկա հակասությունների մասին, որոնցից մեկն էլ այն է, որ չէր կարող դիպուկահարի կրակոցից երեխան վիրավորվել եւ որոշ ժամանակ կենդանի մնալ, մինչդեռ ադրբեջանական կողմը պնդում է ինչպես «հայ դիպուկահարի կրակոցից սպանված լինելու» հանգամանքը, այնպես էլ այն, որ երեխային հասցրել են հիվանդանոց, սակայն կյանքը փրկել չի հաջողվել:**

Ա. Հ.

# ԵԱՀԿ. ժամանակը եկել է Հարավային Կովկասի խաղաղության...

*1-ին էջից*

**Այժմ ժամանակն է, որ առաջնորդները համարձակություն եւ վճռականություն ցուցաբերեն՝ բանակցություններում իրական առաջընթացի հասնելու համար: 2010թ. դեկտեմբերին Աստանայում տեղի ունեցած ԵԱՀԿ գագաթաժողովի ժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարները համաձայնության են եկել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ, որ «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու ավելի վճռական ջանքերի» ժամանակն է: Մենք պետք է հարգենք այդ խոստումը:**

**Ինձ քաջալերում է մարտի 5-ին Սոչիում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների վերջին հանդիպումը Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ: Երեք առաջնորդների համատեղ հայտարարությունը, որով երկու կողմերը պարտավորվում են բոլոր վիճահարույց հարցերը լուծել խաղաղ ճանապարհով: Նրանք համաձայնել են իրականացնել շփման գծում տեղի ունեցող հրաձգությունների համատեղ հետաքննություն, ինչպես նաեւ այլ միջոցառումներ՝ լարվածությունը նվազեցնելու համար: Այն ներառում է նաեւ ամենակարճ ժամկետներում ավարտին հասցնել ռազմագերիների փոխանակումը: Այս ամենը զգուշավոր լավատեսության հիմք է տալիս:**

**Ես նաեւ ողջունում եմ հրադադարի ռեժիմն ու ռազմական ոլորտում վստահություն սերմանելու միջոցառումներն ամրապնդելու հետ կապված նախագահների վերջին համաձայնությունը: Լիտվայի նախագահությունը պատրաստ է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի նպաստի այդ համաձայնության իրականացմանը:**

**Իրենց խոստումներին հավատարիմ՝ կողմերը պետք է զերծ մնան ուժի սպառնալիքից կամ կիրառումից եւ շփման գծից հեռացնեն դիպուկահարներին: Հնարավոր չէ ձեւավորել վստահություն, եթե արյունահեղության հավանականությունը կախված է պարզապես մեկ կրակոցից:**

**Ես լիովին սատարում եմ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքին՝ կապված լարվածության հետագա սաստկացումը կանխելու եւ երկխոսության պահպանման հետ: Այս երկխոսության համար կարող են օգտակար լինել վստահության ձեւավորմանն ուղղված հետագա միջոցառումները, որոնք դրական հիմք կստեղծեն խաղաղ կարգավորման համար: Շփման գծի երկայնքով մոնիտորինգի ուժեղացումը ԵԱՀԿ դաշտային առաքելության կողմից նույնպես կօգնի խթանել անվտանգությունը: Ակնկալում եմ այս հարցերը քննարկել Բաքվում եւ Երեւանում իմ հանդիպումների ժամանակ:**

**Հարավային Կովկասի երկրները նույնպես կարող են մեծ ներդրում ունենալ ԵԱՀԿ-ի կարողությունների եւ զարգացման հարցում: Իմ այցի ժամանակ ես կքննարկեմ ԵԱՀԿ պետությունների եւ կառավարությունների ղեկավարների կողմից 2010թ. դեկտեմբերին Աստանայի գագաթաժողովում ընդունված հավակնոտ հայտարարագրին հաջորդող գործընթացը, որը նախ եւ առաջ մասնակից պետությունների կողմից անվտանգության բոլոր ոլորտների ուղղությամբ ստանձնած պարտավորությունների ամրապնդումն ու լիարժեք իրականացումն է:**

**Ես նաեւ կներկայացնեմ Լիտվայի՝ որպես ԵԱՀԿ նախագահող երկրի, գերակայությունները: Բացի ձգձգված հակամարտությունների կարգավորումից, մեր ուշադրությունը կենտրոնացած կլինի առկա եւ ի հայտ եկող անդրազգային սպառնալիքներին մեր ընդհանուր արձագանքման ուժեղացմանը, ինչպես նաեւ էներգետիկ անվտանգության մասին երկխոսության ամրապնդմանը:**

**Աստանայում մեր ղեկավարները վերահաստատեցին համապարփակ, բազմակողմ անվտանգության մասին ԵԱՀԿ պատկերացումը, որը «խաղաղության պահպանումը կապում է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի հետ»: Իրական անվտանգությունը պահանջում է ուժեղ քաղաքացիական հասարակություն, հարգանք քաղաքացիական հիմնական ազատությունների նկատմամբ եւ բաց ու լայն մասնակցություն քաղաքական կյանքում: Իմ հանդիպումների ընթացքում նախատեսում եմ քննարկել, թե ինչպես Բաքվի ԵԱՀԿ գրասենյակը եւ ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակը, ինչպես նաեւ ԵԱՀԿ հաստատությունները՝ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը, լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը եւ ազգային փոքրամասնությունների հարցերով գլխավոր հանձնակատարը, կարող են էլ ավելի աջակցել բարեփոխումներին, այդ թվում՝ ընտրությունների ոլորտում, եւ նպաստել լրատվամիջոցների ազատության ու հավաքների ազատության նկատմամբ հարգանքի խթանմանը: Ինձ համար շատ ողջունելի է Ադրբեջանի եւ Հայաստանի կառավարությունների շարունակական համագործակցությունը ԵԱՀԿ գրասենյակների հետ, եւ ակնկալում եմ այս համագործակցության ամրապնդում:**

**Դեռ շատ անելիք կա Աստանայում սահմանված հավակնոտ օրակարգի իրականացման ու ամենաբարձր մակարդակով տրված խոստումների կատարման ուղղությամբ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ջանքերին նոր շունչ հաղորդելու համար: Հուսով եմ, որ տարածաշրջան կատարած իմ այցելության ժամանակ առաջխաղացում կունենանք այս երկխոսության մասով:**

# Քադդաֆիի զորքը գրոհում է Ռաս-Լանուֆ նավթային նավահանգիստը

Լիբիայի ղեկավար Մուամմար Քադդաֆիին հավատարիմ կառավարական զորքերը երկրի արեւելքում հարձակումներ են գործում Ռաս-Լանուֆ նավթային նավահանգստի եւ քաղաքի վրա: Դիտորդները խոսում են հնարավոր բեկման մասին: Ականատեսներին վկայակոչելով՝ Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ քաղաքում ապստամբները ծանր կացության մեջ են:

Բացի դրանից, պարզվում է, որ բռնապետն ունի «գաղտնի զենք»՝ բազմամիլիարդանոց ֆոնդ, որի միջոցներով կարող է շատ երկար ժամանակ ֆինանսավորել ապստամբների դեմ ուղղված ռազմական գործողությունները:



Ռաս-Լանուֆը գտնվում է Լիբիայի երկրորդ քաղաք Բենգազիի ճանապարհին, որը ներկայումս ապստամբների գլխավոր հենակետն է: Ռաս-Լանուֆը կարեւորությամբ երկրորդ նավթալցման նավահանգիստն է, որտեղ գտնվում են Լիբիայի խոշորագույն նավթավերամշակման գործարանը եւ քիմիական կոմբինատը: Քաղաքը գրոհում են 32-րդ տանկային բրիգադի ստորաբաժանումները, որի հրամանատարը Քադդաֆիի որդիներից մեկն է:

Հաղորդվում է, որ հրետակոծությանը եւ օդուժի ռմբակոծումներին չդիմանալով՝ հարյուրավոր ապստամբներ սկսել են լքել քաղաքը: BBC-ի տվյալներով, կան տասնյակ սպանվածներ, քաղաքի հիվանդանոցը տարհանվել է:

# Աֆղանստանում ամերիկացիներն սպանել են Կարզայի զարմիկին

Ղանդահարի նահանգում ձեռնարկված հատուկ գործողության ընթացքում ամերիկացի զինծառայողները սպանել են Աֆղանստանի նախագահ Համիդ Կարզայի զարմիկին: Այդ մասին հաղորդում է իրանական Press TV հեռուստաալիքը:

Կարզայի կրտսեր եղբայր Ահմեդ Վալին գերմանական DPA գործակալությանը տված հարցազրույցում ասել է, որ ամերիկացիները սխալմամբ են սպանել նախագահի զարմիկ Հաջի Յար Մուհամմեդ Խան Կարզային:

Press TV-ի տվյալներով, միջադեպը տեղի է ունեցել նախագահի հայրենի գյուղ Կարզում ամերիկացի զինվորականների գործողության ժամանակ: Գյուղի տներից մեկը գրոհելիս ամերիկացիները գնդակահարել են այնտեղ գտնվող Հաջի Յար Մուհամմեդ Խան Կարզային:

Ղանդահարի նահանգային իշխանությունները հաստատել են նախագահի զարմիկի սպանության լուրը: Տեղացի բարձրաստիճան պաշտոնյա Համդուլլահ Նազեկը հայտարարել է, որ դեպքի կապակցությամբ սկսվել է քննություն: Նրա խոսքերով, հիշյալ գրոհը տեղի է ունեցել մարտի լույս 10-ի գիշերը, երբ ամերիկացի զինծառայողների ստորաբաժանումը Կարզ է եկել ուղղաթիռով:

Ի դեպ, նախագահ Համիդ Կարզայը Աֆղանստանում տեղաբաշխված կոալիցիոն ուժերին պարբերաբար քննադատում է ենթադրյալ գրոհայինների դեմ ձեռնարկվող հատուկ գործողությունների ժամանակ խաղաղ բնակիչների սպանվելու պատճառով: ՆԱՏՕ-ի կոալիցիոն ուժերի հրամանատար, ամերիկացի գեներալ Դեւիդ Պետրեուսը օրերս Կարզայից ներողություն էր խնդրել Կունարի նահանգում օդուժի ռմբակոծությունից 9 երեխաների զոհվելու կապակցությամբ: Կարզայը նրա ներողությունը չէր ընդունել: Դրանից հետո անսպասելիորեն («**Ազգը**» գրեց այդ մասին) Քաբուլ էր մեկնել ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը եւ անձամբ ներողություն էր խնդրել նույն միջադեպի համար:

80-ԱՄՅԱԿ

# Մտավորականը եւ իր գործը

Բանասիրության դոկտոր, Երեւանի պետական համալսարանի երկարամյա պրոֆեսոր Ալբերտ Շարուրյանի 80-ամյակը լրացավ մարտի 10-ին, իսկ նրա այսաշխարհային իմաստավորված 76 տարիները դեռ երկար են շարունակել տալու բեղմնավոր վաստակի արգասիքը:

Ծնողներն էին, որպես 1915-ի որբեր, գաղթել Վանից, իսկ ինքը Երեւանում էր ծնվել, բայց գուցե հայոց բնօրրան ծննդավայրը եւս դեր խաղաց, որ նա հետագայում ամբողջությամբ նվիրվեց արեւմտահայ գրականության մեծերին: 1949 թ. դպրոցն ավարտելուց հետո համալսարան մտավ, իսկ մինչ այնտեղ վերադառնալն անցավ մտավորականին բնորոշ ճանապարհ՝ աշխատելով «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագրությունում, ապա՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի մամուլի բաժնում: Ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ 1962 թվականից մինչեւ իր մահը, համալսարանի հայ գրականության ամբիոնի դասախոս էր՝ 1976-ից պրոֆեսորի պաշտոնով: Թեկնածուական ատենախոսության («Սրբուհի Տյուսաբ. կյանքը եւ գործը»)՝ համեստ թվացող մուտքից հետո նրա բանասիրական լրջախոհ հետազոտությունների շիրում երեւացին Պետրոս Դուրյանը, Միսաք Մեծարենցը, Դանիել Վարուժանը, Գրիգոր Զոհրապը:



Աղբյուրագետ-տեքստաբանը հետազոտողի ջանադրությամբ հավաքում-համադրում էր փաստեր, ճշգրտում կենսագրության հայտնի ու անհայտ էջեր, պարզում ստեղծագործության փաստաբուխ առանձնահատկություններ: «Պետրոս Դուրյան. կյանքը եւ գործը» դոկտորական ատենախոսության գրության ընթացքում հիշարժան եղավ նշանավոր վիրաբույժ, մարդաբան Ա. Ճաղարյանի հետ համագործակցությունը Դուրյանի դեմքի պլաստիկ վերականգնման աշխատանքների մեջ, որի ավարտից մեկ տարի հետո՝ 1973-ին, Շարուրյանը փայլուն պաշտպանեց թեզը: Կրտսեր գործընկերների եւ ուսանողների համար գիտության ու մանկավարժության ինքնատիպ մշակը ձեռք բերեց գրավիչ խորհրդավորությամբ օժտված գիտնականի նոր համբավ: Երբ փորձում էին թերություն համարել այն, որ նրա մեջ բանասեր-հետազոտողի ստվերի տակ էր մնում վերլուծող-տեսաբանը, միշտ հաղթում էր ակնհայտ ճշմարտությունը, որ գիտության մեջ հիմնաքարային ու մնայուն են լինելու տեքստա-աղբյուրագիտական հետազոտությունները, որոնց նյութերի վրա վերլուծող-գրականագետները գալու են ու անցնեն:

Ինքը՝ Ա. Շարուրյանը, միշտ շրջանցում էր այս եւ այլ կարգի վերապահությունները այն հստակ հավատամքով, որ ամեն մարդ գալիս է իր գործն անելու, եւ եթե հավատում է դրան, ապրում կատարածով, ապա իմաստավորվում է ամբողջ կյանքը: Նույնիսկ կարող էր թվալ, թե խիստ է իր նկատմամբ, իր արածն այնքան պարզ ու հասկանալի է համարում, որ իմաստ չի գտնում դրանով մտնել կոչումների ու պաշտոնների մրցավազքի մեջ: Պրոֆեսոր Մ. Մկրյանի վախճանից հետո շտապեց գործընկերների տվայտանքները ցրել՝ հայտարարությամբ, թե երբեք ամբիոնի վարիչ լինելու որեւէ մտադրություն չի ունեցել, որեւէ պաշտոն իր համար ծիծաղելի քաշքուկի առարկա է միայն, իսկ ինքը դրա ժամանակը չունի, քանի որ անելիքներն են աներեւակայելի շատ. կազմում-ամբողջացնում էր ոչ միայն տեքստային համահավաքներ, այլեւ իր հեղինակների մասին գրում էր մենագրություններ՝ յուրովի ամբողջացնելով ստեղծագործական դիմապատկերները:

Երբ ծրագրում էր կազմել Գրիգոր Զոհրապի Երկերի լիակատար ժողովածուն՝ չորս հատորով (Առաջին հատորը լույս տեսավ 2001-ին), անմիջապես ստիպված էր լինելու փարատել անգամ մտերիմների երկմտանքն առ այն, որ Զոհրապի գեղարվեստական ժառանգությունը մեկ հատորյակից ավել չէ, ինչպե՞ս եւ ինչո՞վ կարող են լրացվել մնացած հատորները: Քաջատեղյակ վստահությամբ էր հայտարարում, որ փաստաբան եւ թուրքական պառլամենտի երեսփոխան Զոհրապը բազմաբնույթ մեծաքանակ աշխատություններ ու գրություններ է թողել, որոնք ուրույն հետաքրքրություն ունեն գրողական աշխարհի ու անհատականության բացահայտումների առումով եւս: Չորրորդ հատորի պատրաստման ընթացքում իրեն բնորոշ յուրաքանչյուր ցուցադրանքից զերծ լրջությամբ ասաց, որ դեռ բավականին նյութ է մնում, եւ գուցե առաջին անգամ չթաքցրեց կասկածը՝ կհասցնի՞ անել ամեն ինչ, թե՞ ոչ: Եվ լույս տեսան Երկերի ժողովածուի վեց հատորները: Շարուրյանի զենքը փաստն էր, բնավորության բնորոշ գիծը՝ փաստի հետ մտերմիկ կռիվը, որ միշտ ավարտվում էր հաղթական հաստատումներով:

Արդեն հասկանալի պիտի լիներ, որ չէր սիրում, երբ իր մասին խոսում էին՝ մանավանդ դրական գնահատումների միտումներով, բայց լավ էր զգում ոչ ցուցադրական լրջախոհ վերաբերմունքից: Անթաքույց հպարտությամբ մի անգամ խոսեց Վազգեն վեհափառի հետ հանդիպման եւ իր աշխատանքին կաթողիկոս-բանաստեղծի տված գնահատանքի մասին: Սովոր էր ավելի շատ տալ, քան ստանալ, եւ բոլոր հարաբերություններում երեւում էր բանասերի մանրակրկիտ բարեխղճությունը. գիտական թեզերի ղեկավար է եղել, երեք տասնյակին մոտ դոկտորական ու թեկնածուական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս, եւ միշտ նրա վերաբերմունքը կարելի էր բնութագրել որպես ծնողական գորովանք: Ծնողի նման էր վերաբերվում ուսանողի բոլոր հոգսերին, բայց դա չէր մեղմում նրա զայրույթը ծույլերի ու անբարեխիղճների նկատմամբ. անձնական վիրավորանքի նման դժգոհում էր, թե ինչպե՞ս կարելի է, ասենք, մեկը Րաֆֆու «Կայծերը» չկարդա եւ բանասերի դիպլոմ ստանա:

Նվիրյալ ամուսնու եւ ծնողի անխաթար կոչումն էր, որ ստիպում էր Ա. Շարուրյանին երբեմն «օտարվել» իր նկարագրից. սիրում էր խոսել ընտանիքի, երեխաների մասին, քանի որ պարզ ներաշխարհը թույլ չէր տալիս շատերի նման փակ պահել զուտ անձնական այդ միջավայրը: Արդեն տարիների հեռվից հիշում եմ, օրինակ, նրա կրտսեր դուստր՝ Հայկանուշի ատենախոսության հրապարակային պաշտպանության արարողությունը. ծերունազարդ գիտնական հայրը, անչափ հուզված իր՝ անժամանակ վախճանված մոր անունը կրող սիրելի դստեր լրջմիտ պաշտպանությունից, արտասվեց ու դուրս եկավ դահլիճից: Ընտանիքի թեման կարող էր շատ հուզել նրան, եւ մասերի արանքում անպայման կհայտնվեր ծխախոտի գլանակը, ու նա դուրս կգար՝ ծխելու: Ծխում էր շատ, եւ դժվար էր այդ կախվածությունը ներդաշնակել մտավորականի նրա կարգուկանոնված կերպարի հետ: Իսկ գիտության մշակի չափավորությունը գուցե Շարուրյանի կերպարի միայն երեւացո՞ղ կողմն էր, եւ էությունը ներփակված ուներ իր սիրելի Պետրոս Դուրյանի խոսքերը. «Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան...»:

ՎԱԶԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

# ՄԱԿ-էն ներս՝ «Կինը եւ գարունը»



Կանանց միջազգային օրուան առթիւ վերջերս տեղի կ'ունենան յատուկ ելոյթներ ՄԱԿ-ի կազմակերպութեամբ եւ որուն կը նախագահէ ՀՀ մշտական ներկայացուցիչը՝ Դոկտ. **Կարէն Նազարեանը**: Այս առթիւ, ՄԱԿ-ի կեդրոնատեղիի մուտքի սրահին մէջ բացումը կատարուեցաւ իւրօրինակ ցուցահանդէսի մը՝ «Կինը եւ գարունը» խորհրդանշական թեմայով:

Ցուցադրուեցան ծագումով գիւմրեցի նկարչուհի **Էմմա Գրիգորեանի** իւղաներկ պաստառները, որոնք ընդհանրապէս նուիրուած են կանանց: Աւելի քան տասնամեակէ մը ի վեր նկարչուհին կ'ապրի Նիւ Եորք եւ ծանօթ են անոր գործերը շրջանի հայութեան: Ան կու գայ արուեստասէր ընտանիքէ մը. եղբայրը՝ վաղամեռիկ Բագրատը ծանօթ նկարիչ էր եղած, իսկ եղբօրորդին՝ Մանուկը եւս բարձրացող աստղ մըն է հայ նկարչական աշխարհին մէջ: Էմման բազմաբնոյթ իր ստեղծագործութիւններով ամէն ցուցահանդէսի կը ներկայանայ որպէս նորարար մը, նոր թեմայով մը:

Ցուցահանդէսին բացումը կատարուեցաւ մարտի 8ին: Մեծ թիւով հայ, ինչպէս նաեւ՝ օտար զանազան դեսպանութիւններու ներկայացուցիչներ մասնակցեցան բացումին: Դիւանագէտներու կողքին ներկայ էին նաեւ ՄԱԿ-ի քարտուղարութեան անձնակազմի անդամներ, ՄԱԿ-ի մէջ աշխատող պաշտօնատար հայեր, մամլոյ թղթակիցներ:

Բացման խօսքը կատարեց ՄԱԿ-ի մօտ ՀՀ դեսպան Կարէն Նազարեանը եւ ՄԱԿ-ի նորաստեղծ ՄԱԿ Կանայք յանձնաժողովի գործադիր խորհուրդի նախագահ նայջիրիացի դեսպան Ջոյ Օկվուն:

Կանանց Օրը ըլլալով, դեսպանները շնորհաւորեցին ներկայ գտնուող կանանց:

Ներկայ էին նաեւ նիւ եորքահայութիւնը ներկայացնող ծանօթ ազգայիններ, հայ արուեստագէտներ ու գրողներ: Առիթ ստեղծուեցաւ մօտիկէն շփումներ հաստատելու զանազան դիւանագիտական ներկայացուցիչներու հետ:

Մէկ շաբաթ տեւողութեամբ ցուցահանդէսը նուիրուած է ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի յանձնաժողովին:

Կարեւոր նախաձեռնութիւն մը, որուն համար շնորհաւորելու ենք մեր դեսպանն ու իր անձնակազմը, ինչպէս նաեւ պրն. Կարէն Կակոսեանը, որուն հովանաւորութեամբ ալ կարելի դարձաւ կազմակերպել այս ցուցահանդէսը:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ Եորք



# Լավ գործի գեղեցիկ շարունակություն

**Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը շարունակում է Երեւանի բուհերում համերգ տալու ծրագիրը:**

**Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում կայացած նախորդ համերգից հետո ուսանողները շարունակ հետաքրքրվում էին՝ երբ է լինելու հաջորդը եւ ինչ ծրագրով:**

**Հաջորդ հերթը բժշկական համալսարանինն էր:**

**Համերգը նվիրված էր կանանց տոնին՝ Մարտի 8-ին:**

**Համերգին ներկա էր մաեստրո Էդուարդ Միրզոյանը, որին ունկնդիրների անունից ողջունեց համալսարանի պրոռեկտոր Մ. Նարիմանյանը, իսկ նվագախմբի անունից՝ Էդուարդ Թոփչյանը: Ծրագիրը գրավիչ էր՝ Վ. Ա. Մոցարտի 40-րդ սիմֆոնիա, Էդուարդ Միրզոյանի «Շուշանիկ» քնարական պատկեր:**



**Ինչպես միշտ, կատարումն անթերի էր, սքանչելի: Բուռն ծափահարությունները վարձատրեցին լրացուցիչ համարով՝ Յասմիկ Թորոսյանը կատարեց Մոցարտի «Ալելուիա»: Երիտասարդ ու հմայիչ երգչուհու հզոր ձայնը գերեց ունկնդիրներին, խորհրդավոր ու անմոռաց կախարդանք ստեղծեց դահլիճում: Ունկնդիրները երկար ու ջերմ ծափահարություններով հայտնեցին իրենց շնորհակալությունը:**

**«Շուշանիկ» քնարական պատկերը շատերին ծանոթ է «Քաոս» ֆիլմից: Վեպի հերոսուհու մեղմ ու քնքուշ պատկերը հառնեց երաժշտության հնչյունների տակ, հետո նրա հետ ապրեցինք առաջին սերը, հիասթափության ու կյանքի նոր հորիզոնների, նոր երջանկության ակնկալիքը: Մի պահ թվաց՝ բեմում կանգնած է Շուշանիկը՝ ամաչկոտ ժպիտով ու հայուհու գեղեցիկ աչքերով:**

**Հուզված էին բոլորը, երեւի ամենից շատ՝ Էդուարդ Միրզոյանը: Դա ստեղծագործող մարդու վայելքի եզակի պահերից էր՝ ամեն անգամ նոր ու անմոռանալի: Ունկնդիրների անունից վաստակավոր երգահանին մաղթում ենք գարնանային տրամադրություն եւ առողջություն, որ վայելքի նման պահեր դեռեւս շատ ապրի:**

**Համերգն ավարտված է: Ունկնդիրները հուզված են: Սաներն այնքան էին հուզված, որ հրաժեշտ տալիս շնորհավորեցին ... Նոր տարի: Համոզված եմ՝ ավելի լավ նվեր Մարտի 8-ի առթիվ նրանք դեռ չէին ստացել: Շնորհակալություն, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբին ու նրա ղեկավարին տոնական այս սքանչելի նվերի համար:**

**Նվագախմբի համակրելի ու սիրունատես կանանց էլ՝ շնորհավոր Մարտի 8-ը: Մինչ հանդիպում Ապրիլի 7-ի առիթով. չէ՞ որ կանանց միամսյակը նոր է սկսվում:**

ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Արամ Ա կաթողիկոս. «Հրատարակչական աշխատանքը կաթողիկոսարանի մշակութային առաքելութեան կարեւոր տարածքներէն մէկն է»

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը հրատարակչական աշխատանքը միշտ նկատած է իր համազգային առաքելութեան կարեւոր մարզերէն մէկը: Անցնող տասնամեակներուն այստեղ, կաթողիկոսներու նախաձեռնութեամբ ու քաջալերանքով կարեւոր հրատարակութիւններ կատարուած են: Արդարեւ, թէ՛ Մայրավանքի տպարանը, թէ՛ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքը եւ թէ Կաթողիկոսարանէն ներս հաստատուած հրատարակչական հիմնադրամները անցնող տարուան ընթացքին լայն գործունէութիւն ունեցած են հրատարակչական աշխատանքի իմաստով:

Խօսելով այս մասին, Արամ Ա. կաթողիկոսը ըսաւ. «Հայ գիրքը մեր Սուրբ աթոռին համար կը մնայ սրբազան արժէք: Հետեւաբար, հայ գիրքին տպագրութիւնը ու տարածումը մեր առաքելութեան առաջնահերթութիւններէն մէկն է: Հայ գիրքին արժէքը բազմակողմանի է, անոր տեղը հայ կեանքէն ներս առանցքային է ու դերը՝ վճռական: Ահա թէ ինչու մեր Սուրբ աթոռին հայրապետները յատուկ կարեւորութիւն տուած են հայ գիրքին՝ հայ գիրք տպելով, ցուցահանդէսներ կազմակերպելով, հայ գիրքի տարածումը քաջալերելով: Նաեւ Մենք կը փորձենք շարունակել մեր Կաթողիկոսութեան յանձնառութիւնը այս ուղղութեամբ: Մայրավանքի տպարանը միշտ կը գործէ. Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական բաժանմունքը իր վաստակաշատ ու հայագէտ տնօրէնին՝ դոկտ. Զաւէն Եկաւեանին առաջնորդութեամբ գործնապէս կը քաջալերէ Կաթողիկոսարանի հրատարակչական աշխատանքները. Կաթողիկոսարանէն ներս հաստատուած հրատարակչական հիմնադրամները կը շարունակեն իրենց գործունէութիւնը: Պիտի ուզենք որ մեր մտաւորականները գիրք գրեն, ուսումնասիրութիւններ կատարեն, հրատարակութեան համար լուրջ գործեր պատրաստեն: Մենք պատրաստ ենք ընդառաջելու որակաւոր աշխատասիրութիւններու: Սակայն աւելին՝ մենք կ'ուզենք որ մեր ժողովուրդի զաւակները գիրք ունենան ու գիրք կարդան: Հայ տան կարեւոր անդամներէն մէկը պէտք է դառնայ հայ գիրքը: Գիրքը գրադարանները զարդարելու համար չէ, այլ կարդացուելու համար. ան հոգեմտաւոր հարստացման աղբիւր է»:

Տպագրութեան առընթեր հայ գիրքի տարածումը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան համար հիմնական մտահոգութիւն է: Այս գծով, որպէս քաջալերանք հայ գիրքի տարածման, Կաթողիկոսարանի հրատարակութիւնները անվճար կը տրամադրուին բոլոր հաստատութիւններուն ու դպրոցներուն եւ զանազան առիթներով՝ մեր մտաւորականներուն:

# Հայաստանում հաշմանդամային սպորտը պետական հոգածության կարիք ունի



ՖՈՏՈԼՈՒՐ

Սլավոնական երկրների լեռնադահուկային սպորտի բաց առաջնությունից Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության անդամները մեդալներով են տուն վերադարձել: Այս մասին երեկ «Հենարան» ակումբում կայացած մամուլի ասուլիսում տեղեկացրեց հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ **Հակոբ Աբրահամյանը**:

Ուկրաինայում կայացած այդ առաջնությանը մասնակցել են 3 հայ մարզիկներ: Առավել հաջող է հանդես եկել **Միեր Ավանեսյանը**՝ հաղթող ճանաչվելով հսկա ոլորավայրէջքում: **Գայանե Ուսմյանը** նույն մրցաձեւում արժանացել է բրոնզե մրցանակի, իսկ **Գառուշ Դանիելյանը** գրավել է 4-րդ տեղը: Մեր մարզիկները պարգեւատրվել են նաեւ գավաթներով: Մրցումներին մասնակցել են Հայաստանի, Ուկրաինայի եւ Ռուսաստանի մոտ 25 մարզիկներ:

Հակոբ Աբրահամյանը տեղեկացրեց, որ սա մեր մարզիկների առաջին լուրջ հաջողությունն էր: Գայանեն անցյալ տարի մասնակցել էր Վանկուվերում կայացած ձմեռային պարաօլիմպիական խաղերին: Նա հաջողությամբ էր հաղթահարել մրցասարածությունը, սակայն ժամանակից շուտ էր մեկնարկել, ուստի նրա արդյունքը չեղյալ էր համարվել:

Ըստ Հակոբ Աբրահամյանի, Ուկրաինայում մրցումները լավ էին կազմակերպված: Կազմակերպիչներն էլ մեր մարզիկների ծախսերը վերցրել էին իրենց վրա: Որոշակի ֆինանսական օգնություն ցույց տվեցին նաեւ Ուկրաինայում բնակվող հայ գործարարները: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ տարի նման մի մրցաշար էլ անցկացնել Ծաղկաձորում:

Մեր մարզիկները Սպիտակի երկրաշարժի ժամանակ են հաշմանդամ դարձել, այնուհետեւ ընդգրկվել են «Փյունիկի» վերականգնողական ճամբարներում, սկսել են մարզվել:

Գայանեն նշեց, որ շատ է սիրում սպորտը, մի քանի մարզաձեւ է փորձել եւ ընտրել է լեռնադահուկային սպորտը: Նրա երազանքն է Սոչիի պարաօլիմպիադայում մեդալ նվաճել: Գառուշն առաջին անգամ դահուկներ է հագել 12 տարեկանում, մասնակցել է 1998-ին Նագանոյում կայացած պարաօլիմպիադային: Գառուշի համար եւս Ուկրաինայում կայացած մրցումներն առաջին լուրջ հաջողությունն էին: Նա զբաղվում է նաեւ առագաստանավային սպորտով, մեր թիմի ավագն է: Առագաստանավը Սիդնեյի օլիմպիադայից առաջ մեր մարզիկներին էին նվիրել սփյուռքահայերը: Այդ առագաստանավով 3 հոգուց բաղկացած անձնակազմը մարզումներ է անցկացնում Սեւանա լճում: Մեր թիմը մասնակցելու է Անգլիայում կայանալիք առագաստանավային սպորտի աշխարհի առաջնությանը, որը նաեւ վարկանիշային է 2012-ի Լոնդոնի ամառային պարաօլիմպիադայի ուղեգրերի համար մղվող պայքարում:

Բացի առագաստանավորդներից, հույս կա, որ Լոնդոնում Հայաստանը կներկայացնեն նաեւ 2 ծանրորդներ: Նրանցից մեկը՝ Գրեսա Խնձրցյանը 2007-ին Հունաստանում կայացած բաց առաջնությունում արծաթե մեդալ էր նվաճել: Այժմ էլ Գրեսան տրենաժան մարզումներ է անցկացնում: Հակոբ Աբրահամյանը շնորհակալություն հայտնեց Երեւանի պետհամալսարանի ուսխորհրդին, որը մոտ կես մլն դրամի հանգանակություն է կատարել ու տրամադրել է Գրեսային մարզումների նորմալ ընթացքն ապահովելու համար:

Հակոբ Աբրահամյանը, որը նաեւ Հայաստանի պարաօլիմպիական կոմիտեի նախագահն է, ցավով նշեց, որ պետությունը համապատասխան ուշադրություն չի դարձնում հաշմանդամային սպորտին: Պետբյուջեից ընդամենը 3 մլն դրամ է հատկացվում, որը բավարարում է միայն տարին մեկ անգամ Կարմիր Խաչի հետվնասվածքային վերականգնողական կենտրոնում 60-70 մարզիկների մասնակցությամբ 6 մարզաձեւից (բասկետբոլ, սեղանի թենիս, լող, շախմատ, ծանրամարտ, սայլակավազք) հաշմանդամային սպորտի փառատոն անցկացնելու համար: Այս տարի այդ մրցումները նախատեսված են հունիսի սկզբին:

Հակոբ Աբրահամյանը համոզված է, որ եթե ֆինանսական համապատասխան միջոցներ հատկացվեն, ապա մեր հաշմանդամ մարզիկները կարող են զանազան մրցումների մասնակցել ու մեդալներ նվաճել: Համեմատության համար նա նշեց, որ Ադրբեջանի պարաօլիմպիական կոմիտեի բյուջեն 2 մլն դոլար է:

# «Միկայի» լուրջ հայտը


ՖՈՏՈԼՈՒՐ

**Երեկ «Միկա» մարզադաշտում կայացավ ֆուտբոլի Հայաստանի գավաթի քառորդ եզրափակիչի վերջին հանդիպումը: «Միկան» հյուրընկալել էր Դիլիջանի «Իմպուլսին»: Խաղն անցավ «Միկայի» առավելությամբ, որը հաղթելով 3-0 հաշվով, հաջորդ փուլ դուրս գալու լուրջ հայտ ներկայացրեց: Արդեն 3-րդ րոպեին Նարեկ Բեգլարյանը գլխի հարվածով փորձեց գրավել դարպասը, սակայն հաջող խաղաց «Իմպուլսի» դարպասապահ Մայիս Ազիզյանը: Նարեկ Բեգլարյանի 2-րդ փորձը պսակվեց հաջողությամբ: Հսկողությունից դուրս մնացած Նարեկը փոխանցում ստանալով, մտավ տուգանային հրապարակ ու հուժկու հարվածով գրավեց դարպասը:**

**Ընդմիջումից հետո «Միկան» եւս 2 անգամ հասավ հաջողության: Աչքի ընկան Պեդրո Լոպեսն ու Էդնեյը: Հաղթելով 3-0 հաշվով, «Միկան» հաջորդ փուլի ուղեգրի հարցը գործնականում լուծեց: Այս խաղում «Միկայի» ֆուտբոլիստների գործողությունները ղեկավարում էր Հակոբ Մկրյանը, քանի որ գլխավոր մարզիչ Արմեն Շահգելդյանն առաջնության մեկնարկային տուրում «Շիրակի» հետ հանդիպումից հետո մրցավարի հետ վիճաբանելու համար որակազրկվել էր մեկ խաղով:**

**Մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:**

**Հակոբ Մկրյան («Միկա»)- Մեզ հաջողվեց իրականացնել ծրագրածը: Շատ բարձր էր ֆուտբոլիստների տրամադրվածությունը, գոլային պահեր ստեղծեցինք, որից երեքը հաջողությամբ իրացրինք: Լավ գիտակցելով «Իմպուլսի» ներուժը, հարկավոր է գավաթային պատասխան հանդիպմանն էլ լրջորեն նախապատրաստվել: Օգտակար եղավ նաեւ այն, որ ուսումնասիրել էինք «Իմպուլսի» խաղը «Փյունիկի» հետ առաջնության մրցավեճում:**

**Արմեն Գյուլբուդաղյանց** **(«Իմպուլս»)- Ցանկանում էինք վերահսկել գնդակը, բայց չէր ստացվում: Բաց թողած գոլից հետո փորձեցինք շտկել դրությունը, սակայն շտապեցինք ու ավելի վատ խաղացինք, որի արդյունքում եւս 2 գնդակ հայտնվեց մեր դարպասում: Թիմն արդեն 2 խաղում գոլ չի խփում, առջեւի գծում տրություն չկա: Կփորձենք լուծել այդ խնդիրը:**

# Հայաստանը կներկայացնեն 8 շախմատիստներ

**Մարտի 22-ից ապրիլի 3-ը Ֆրանսիայի Էքս լը Բեն քաղաքում անցկացվելիք շախմատի տղամարդկանց Եվրոպայի անհատական 12-րդ առաջնությունում Հայաստանը կներկայացնեն 8 շախմատիստներ: Չեմպիոնի տիտղոսը կվիճարկեն Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Զավեն Անդրեասյանը, Արման Փաշիկյանը, Ավետիք Գրիգորյանն ու Հրանտ Մելքումյանը:**

**Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 113700 եվրո է, որը բաշխվելու է լավագույն արդյունքի հասած 25 շախմատիստների միջեւ: Եվրոպայի չեմպիոնը բացի ոսկե մեդալից, կպարգեւատրվի 20 հազար եվրոյով, 2-րդ մրցանակակիրը կստանա 15 հազար եվրո, բրոնզե մեդալակրի պարգեւը կկազմի 11 հազար եվրո: Սահմանված են նաեւ 5600 եվրոյի հատուկ մրցանակներ: Տղամարդկանց Եվրոպայի առաջնության մրցանակային ընդհանուր հիմնադրամը 30700 եվրոյով գերազանցում է կանանց նույնատիպ մրցաշարի պարգեւավճարին:**

**Ի դեպ, Եվրոպայի տղամարդկանց անհատական առաջնությունում հանդես կգան մի խումբ շախմատիստուհիներ, ինչը մրցակարգով չի արգելվում: Սակայն նրանց համար ոչ մի հատուկ մրցանակ չի նախատեսված: Բացի Հուդիթ Պոլգարից, որը մշտապես մասնակցում է տղամարդկանց մրցաշարերին, Եվրոպայի առաջնությունում հանդես կգան Աննա Մուզիչուկը, Վիկտորիա Չմիլիտեն, Ելենա Դեմբոն, Սալոմե Մելիան, Լելա Ջավախիշվիլին, Նատալյա Ժուկովան, Զովանկա Հուսկան եւ այլ շախմատիստուհիներ:**



# Ավանդական մրցաշարը վերջին անգամ կանցկացվի

Այսօր Մոնակոյում 20-րդ անգամ կմեկնարկի շախմատի «Ամբեր» մրցաշարը, որն անցկացվելու է վերջին անգամ: Մրցաշարը յուրահատուկ է նրանով, որ մրցակիցները միմյանց հետ երկուական պարտիա են անցկացնում արագ եւ «կույր» շախմատի կանոններով: Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 227 հազար եվրո է:

Ինչպես միշտ, մրցաշարը շատ ուժեղ կազմ ունի: Լեւոն Արոնյանը (2808) կմրցի աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդի (2817), Մագնուս Կառլսենի (2815), Վլադիմիր Կրամնիկի (2785), Վասիլի Իվանչուկի (2779), Սերգեյ Կարյակինի (2776), Վեսելին Թոփալովի (2775), Հիկարու Նակամուրայի (2774), Ալեքսանդր Գրիշչուկի (2747), Վուգար Հաշիմովի (2746), Բորիս Գելֆանդի (2733) եւ Անիշ Գիրիի (2690) հետ:

Լեւոն Արոնյանը 2006-ին արագ շախմատի մրցաշարում գրավել է 2-րդ տեղը, իսկ 2008-ին եւ 2009-ին ընդհանուր հաշվարկով հաղթող է ճանաչվել:

# Հաղթական տուր

**Ռեյկյավիկում ընթացող շախմատի մրցաշարի 2-րդ տուրը հաջող էր Գրիգոր Սեւակ Մխիթարյանի համար, որը հաղթեց Դագուր Ռագնարսոնին: 2 տուրից հետո Մխիթարյանն ունի մեկ միավոր: 32 շախմատիստներ 2-ական միավորով գլխավորում են աղյուսակը:**

# Երեւանը կհյուրընկալի բռնցքամարտիկներին

Երկրորդ տարին անընդմեջ, ապրիլի 11-17-ը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կանցկացվի բռնցքամարտի միջազգային խոշոր մրցաշար, որտեղ կխաղարկվեն ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի մրցանակները: Երեւան կժամանեն Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի, Իսպանիայի հավաքականները, որոնք իրենց ուժեղագույն կազմերով են մասնակցելու մրցաշարին:

Այս մրցաշարը մեր բռնցքամարտիկների համար ուժերի հիանալի ստուգատես կլինի: Քաշային 10 կարգերից յուրաքանչյուրում հանդես կգան 3-4 հայ բռնցքամարտիկներ: Այս օրերին մեր հավաքականի 22 թեկնածուներ գլխավոր մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանի գլխավորությամբ ուսումնամարզական հավաք են անցկացնում Աբովյանում: Հավաքի արդյունքներով կընտրվեն 5 բռնցքամարտիկներ, որոնք Հայաստանը կներկայացնեն մարտի 22-27-ը Չեխիայում կայանալիք միջազգային մրցաշարում: Վերը նշված 2 մրցաշարերում իրենց լավագույնս դրսեւորած բռնցքամարտիկներն էլ կընդգրկվեն Հայաստանի հավաքականում, որը հունիսին Սոֆիայում կմասնակցի Եվրոպայի առաջնությանը:

# «Դինամոն» շարունակեց հաղթարշավը



Կայացան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի 1/8 եզրափակիչ առաջին հանդիպումները: Ռուսական 3 թիմերից հաջող հանդես եկավ միայն Մոսկվայի «Սպարտակը», որն Ամստերդամում 1-0 հաշվով պարտության մատնեց «Այաքսին»: Հաղթական գոլը խփեց Ալեքսը 57-րդ րոպեին: Այդ հաղթանակում մեծ էր «Սպարտակի» ուկրաինացի դարպասապահ Դիկանի ներդրումը, որը գերազանց խաղ ցուցադրեց:

Իսկ ահա «Տվենտե»-«Զենիթ» հանդիպման արդյունքն իսկական շոկ էր ռուսական ֆուտբոլի համար: Հոլանդիայի չեմպիոնը 3 անպատասխան գնդակ խփեց «Զենիթի» դարպասը ու փաստորեն վճռեց մրցակցության ելքը:

Անհաջողության մատնվեց նաեւ Մոսկվայի ԲԿՄԱ-ն, որը սեփական դաշտում 0-1 հաշվով զիջեց «Պորտոյին»: 70-րդ րոպեին Գուարինի խփած միակ գոլը հաղթական էր պորտուգալացիների համար:

Իր երկրպագուներին կրկին ուրախացրեց Կիեւի «Դինամոն»: Յուրի Սյոմինի սաներն այս անգամ սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեցին անգլիական «Մանչեսթր Սիթիին»: 25-րդ րոպեին հաշիվը բացեց Անդրեյ Շեւչենկոն, ընդմիջումից հետո Օլեգ Գուսեւը 2-րդ գոլը խփեց:

«Բենֆիկան» սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց ՊՍԺ-ին: Անհաջող խաղաց «Լիվերպուլը»՝ հյուրընկալվելիս զիջելով պորտուգալական «Բրագային» (0-1): «Վիլյառեալը» մրցակցի դաշտում 3-2 հաշվով առավելության հասավ «Բայերի» նկատմամբ, իսկ «Էյնդհովենի» եւ «Գլազգո Ռեյնջերսի» մրցավեճում դարպասները մնացին անառիկ:

1/8 եզրափակիչ պատասխան հանդիպումները կկայանան մարտի 17-ին:

# Գործարքը կայացավ

Ինչպես սպասվում էր, գերծանրքաշային կարգում IBF-ի, WBO-ի եւ IBO-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն եւ WBA-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր Դեւիդ Հեյը պայմանագիր են կնքել այս տարվա ամռանը մենամարտելու մասին: Երկար սպասված այդ մենամարտը կանցկացվի հունիսի 25-ին կամ հուլիսի 2-ին Գերմանիայում: Մրցավայրի ընտրության հարցում 3 տարբերակ կա: Մենամարտը կանցկացվի Դորտմունդի «Բորուսիայի», «Կայզերսլաուտերնի» եւ «Շալկե-04»-ի մարզադաշտերից որեւէ մեկում:

Պայմանագրի կնքման փաստը հաստատել է նաեւ Կլիչկո եղբայրների պրոմոութեր Բեռնդ Բենտեն: Նա նաեւ նշել է, որ Հեյի հետ կարող է հանդիպել ինչպես Վլադիմիրը, այնպես էլ Վիտալին: Վերջինս մարտի 19-ին պետք է WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսի պաշտպանության համար մենամարտի Օդլանիեր Սոլիսի հետ: Իսկ ահա Վլադիմիր Կլիչկոյի եւ Դերեկ Չիսորայի մենամարտը, որ նախատեսված էր ապրիլի 30-ին, չի կայանա: Կլիչկոն մկանային վնասվածք է ստացել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# ԼՂ-ում հանրաքվեի «ժամանակային շրջանակները կբարդացնեն իրավիճակը»

### *Մամեդյարովի խոսքով՝ դիպուկահարները չեն հեռացվի, քանի հայկական ուժը վերահսկում է Ղարաբաղի հարակից շրջանները*

Ադրբեջանը ցանկանում է, որ հայկական զինուժը դուրս գա «գրավյալ տարածքներից», այդուհետեւ բոլոր հարցերը կարելի է լուծել: Ըստ էության, սա է այն հիմնականը, որ փորձել է ասել Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը «Մեդիամաքս» գործակալությանը տված հարցազրույցում, որին թեեւ Ադրբեջանի ԱԳ նախարարը արձագանքել է երեկ, սակայն հարցերն ուղարկվել էին մինչեւ մարտի 5-ի Սոչիի հանդիպումը:

Ամեն ինչ Մամեդյարովը հարցազրույցում կապել է վերը նշված գաղափարին, երբ այդպիսի մի քայլը հայկական կողմից կնշանակի վտանգել Ղարաբաղի ժողովրդի կյանքը ամենաուղղակի իմաստով: Այնպիսի տպավորություն կարելի է ստանալ, թե Ադրբեջանն իրեն Թուրքիայի տեղը դրել ու ղարաբաղյան հարցի լուծման համար մի նախապայման է առաջ քաշում, մոռանալով, որ այստեղ բոլոր հարցերը պետք է համաձայնեցվեն միասին, ինչպես քանիցս հայտարարել ու ընդգծել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարները:

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ վստահության մակարդակի էական նվազման մասին գնահատականների առնչությամբ էլ Մամեդյարովի «երգը» նույն ձայնապնակից է ստացվել. «Դժվար է խոսել կողմերի միջեւ վստահության որեւէ մակարդակի մասին, երբ նրանք, ցավոք, գտնվում են չհայտարարված պատերազմի իրավիճակում: Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքների օկուպացման փաստը՝ տվյալ հողերում լիակատար էթնիկ զտումների իրականացման հետ մեկտեղ, իհարկե, չեն կարող նպաստել վստահության մակարդակի բարձրացմանը»: Ինչպես ասում են, ամոթ չունենալը քաղաքականության մեջ էլ հրաշալի զգացողություն է, քանի որ Ադրբեջանի ԱԳ նախարարը, մոռանալով սեփական պատմությունը, խոսում է «զտումներից»:

Մամեդյարովն անդրադարձել է նաեւ Թոմաս դե Վաալի այն մտքին, թե Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները «հայտնվել են իրենց իսկ լարած որոգայթում»՝ իրենց ժողովուրդներին հրապարակայնորեն խոստանալով լիակատար հաղթանակ ղարաբաղյան խնդրում ու հիմա, եթե նույնիսկ մի կողմը ցանկանա ստորագրել նորմալ, ողջամիտ համաձայնագիր մյուս կողմի հետ, դա արդեն գրեթե անհնարին կլինի ներքին քաղաքական դրդապատճառներից ելնելով: Ադրբեջանի արտգործնախարարի ներկայացմամբ, ղարաբաղյան հակամարտության կարգավորումը կառուցվում է միջազգային իրավունքի նորմերի եւ սկզբունքների եւ այդ շրջանակներում ընդունված որոշումների եւ փաստաթղթերի հիման վրա, ինչն էլ «հնարավորություն է ստեղծում խուսափելու ներքաղաքական դրդապատճառներից, քանի որ ե՛ւ Ադրբեջանը, ե՛ւ Հայաստանը, դառնալով միջազգային կազմակերպությունների անդամներ, ստանձնել են համապատասխան պարտավորություններ, որոնք անհրաժեշտ է կատարել»:

Իսկ թե ինչու չի դադարեցվում հակահայկական հռետորությունը, Մամեդյարովն արդարանալու ձեւ է գտել. «Դե, հանուն արդարության պետք է նշել, որ հակաքարոզչությամբ զբաղվում է ոչ միայն ադրբեջանական կողմը»: «Հավատացեք, հայկական զորքերի դուրսհանումն ադրբեջանական տարածքներից բոլորովին այլ իրավիճակ կստեղծի տարածաշրջանում: Մենք, առնվազն, կկարողանանք խոսել իրավիճակի զարգացման կանխատեսելիության, հաղորդակցությունների բացման, կորսված վստահության վերականգնման մասին», ասել է Մամեդյարովը, 2004-ի ապրիլից արտգործնախարար լինելու պարագայում կարճ հիշողություն դրսեւորելով, թե այդ ինչ տրամաբանությամբ կարող է չվերահսկվող տարածքների պարագան հնարավոր դարձնել, ասենք, խոսակցությունները հաղորդակցությունների բացման մասին:

Հունվարի 14-ին Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ասել էր, որ Հայաստանը որպես հիմք է ընդունում ղարաբաղյան կարգավորման՝ միջնորդների առաջարկած 3 սկզբունքներն ու 6 բաղադրիչները, իսկ Ադրբեջանը հայտարարում է, որ ընդունում է միայն տարածքային ամբողջականության սկզբունքը եւ տարածքների վերադարձի դրույթը: «Ադրբեջանին հարկ է կողմնորոշվել եւ հստակ պատասխան տալ. կամ նա ընդունում է բոլոր սկզբունքները եւ դրույթները, կամ՝ ոչ», ասել էր Էդվարդ Նալբանդյանը: Այս կապակցությամբ դիվանագիտական զգալի կենսագրություն ունեցող Մամեդյարովի պատասխանն ուղղակի սարերից է: Բնավ էլ հասկանալի չէ, թե ինչը նկատի ունենալով Ադրբեջանի ԱԳ նախարարը պատասխանել է. «Դա ուրախալի փաստ է, եւ կարծում եմ, որ դա կարող է հնարավորություն ստեղծել սկսելու աշխատել մանրամասն խաղաղության համաձայնագրի ուղղությամբ»:

Մամեդյարովի խոսքերով, «3 սկզբունքները եւ 6 բաղադրիչները նորացված Մադրիդյան փաստաթղթի հիմքն էին, որը փոխանցվել էր Հայաստանին եւ Ադրբեջանին 2009 թվականին Աթենքում՝ ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների գագաթաժողովի ընթացքում»: Կրկին չնշելով, թե ի վերջո որն է Ադրբեջանի մոտեցումը, Մամեդյարովը «ցավով» նշել է, թե «կորցրեցինք ավելի քան մեկ տարի, չնայած մարտի 5-ին Սոչիում նախագահների հանդիպման ժամանակ կարելի էր որոշակի դրական միտումներ նկատել դեպի խաղաղության համաձայնագրի վրա աշխատանքի մեկնարկը շարժվելու ուղղությամբ»:

Թե ինչու Ադրբեջանը չի համաձայնում դիպուկահարներին շփման գծից հեռացնելու մասին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկին, Մամեդյարովը կրկին պտտեցրել է «օկուպացվածության ձայնապնակը»: «Տվյալ հակամարտությունը սառեցված չէ եւ ամեն ժամ, ամեն րոպե կա զենքի կիրառման իրական վտանգ»:

Եվս մեկ հարց վերաբերել է նախորդ տարեսկզբին Ադրբեջանի նախագահի հայտարարությանը, թե հայկական կողմը խախտել է նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները՝ պահանջելով ամրագրել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի/քվեարկության անցկացման ամսաթիվը: Թե ինչու հանրաքվեի/քվեարկության հստակ բովանդակային եւ ժամանակային չափանիշների սահմանումն ու ամրագրումը չի գոհացնում Բաքվին, Մամեդյարովը այնպիսի պատասխան է տվել, կարծես բանակցային գործընթացից բացարձակապես անտեղյակ լինի. «Ժամանակային շրջանակները կբարդացնեն իրավիճակը»: Եվ սա այն դեպքում, երբ այդ հարցը քննարկվում է եւ վաղ թե ուշ հասնելու է մինչեւ ժամկետների քննարկում ու որոշում:

«Պետք է իրականացնել հսկայական նախապատրաստական աշխատանք, հալեցնել սառույցը հարաբերություններում, վերականգնել վստահությունը, վերադարձնել բնակչությունը, պայմաններ ստեղծել նրանց բարեկեցիկ համատեղ գոյակցության համար: Չի կարելի հանրաքվե անցկացնել հրացանի փողի եւ ճնշման տակ: Ցանկացած շտապողականություն հանուն ժամանակային շրջանակների պահպանման նման զգայուն եւ փխրուն հարցերում կարող է էլ ավելի բարդացնել իրավիճակը եւ խաչ քաշել խաղաղ կարգավորման բոլոր ջանքերի վրա», Սոչիի հանդիպումից հետո կառուցողական առաջընթացի մասին հայտարարություն արած Մամեդյարովի պատկերացումները այսքանով էլ փաստորեն ավարտվում են:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱԿԱԶԴԵՑԻԿ

# Ֆրանսիայի ԱԳՆ-ն պատասխանում է Բաքվին

**Երեկվա համարում «Ազգը» տեղեկացրեց, որ Ֆրանսիայի նորանշանակ արտգործնախարար Ալեն Ժյուպեն Սենատում պատասխանելով պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամ Ֆրանսուա Ռոշբլուանի հարցին՝ կապված ԼՂ հիմնահարցի հետ, «Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ, նշել է, որ Փարիզի համար «անշուշտ, ինքնորոշման իրավունքը հիմնարար սկզբունքն է՝ ցանկացած հակամարտություն լուծելիս»: Մենք նաեւ տեղեկացրինք, որ Ադրբեջանում Ժյուպեի այս հայտարարությունը կտրուկ արձագանքների է արժանացել. մասնավորապես Փարիզում Ադրբեջանի դեսպան Էլչին Ամիրբեկովը դիմել է Ֆրանսիայի ԱԳՆ՝ պարզաբանում ստանալու եւ նախարար Ժյուպեի հետ անձնական հանդիպում պահանջելով: Ինչպես երեկ տեղեկացանք Ադրբեջանի «կիսապաշտոնական» 1news.az կայքից, դեսպան Ամիրբեկովը վերոհիշյալ բովանդակությամբ նամակ է հղել ֆրանսիական արտգործնախարարություն, որտեղից ստացվել է հետեւյալ պատասխանը: Նախ՝ նախարարությունը նշել է. «Քանի որ նախարար Ժյուպեն այժմ երկրում չէ, առայժմ անհնար է դեսպանի հետ հանդիպում կազմակերպել», այնուհետեւ արտահայտել է Փարիզի՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի դիրքորոշումը ԼՂ հիմնահարցում: Ֆրանսիայի ԱԳՆ-ն «հիշեցրել» է Ռուսաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի նախագահների Մուսկոկայում եւ Ակվիլայում արած հայտարարությունները, որ «հակամարտությունը պետք է լուծվի ըստ Հելսինկյան եզրափակիչ ակտում եւ ՄԱԿ-ի կանոնադրությունում տեղ գտած սկզբունքների»: Որպես այդպիսին Ֆրանսիայի ԱԳՆ, ըստ ադրբեջանական կայքի, նշել է. «ԼՂ հարակից տարածքների վերադարձ, ԼՂ միջանկյալ կարգավիճակի, անվտանգության եւ ինքնավարության երաշխիքների տրամադրում, Հայաստանի հետ ԼՂ կապող միջանցքի տրամադրում, ԼՂ վերջնական իրավական կարգավիճակի որոշում՝ անխտիր իրավաբանական ուժ ունեցող ազատ կամարտահայտության միջոցով եւ խաղաղության միջազգային երաշխիքների տրամադրում՝ ներառյալ խաղաղապահական առաքելություն»: Հատկանշական է, որ Ֆրանսիայի ԱԳՆ-ի պատասխանը, փաստորեն, անմիջականորեն չի պատասխանում ադրբեջանցի դիվանագետի հարցին, այլ ընդամենը հիշեցնում է Մինսկի խմբի շրջանակներում ընթացող խաղաղ բանակցությունների ընթացքը եւ արդեն իսկ արված հայտարարությունները: Թերեւս ադրբեջանական կողմին մնում է բավարարվել նույն՝ ավելի վաղ եւ պարբերաբար արված եւ արվող հայտարարություններով, ըստ որոնց Մինսկի խմբի համանախագահները շեշտում են, որ ինքնորոշման իրավունքը, տարածքային ամբողջականությունը եւ ուժի չկիրառումը մեկ ամբողջական փաթեթ ներկայացնող սկզբունքներ են, եւ դրանցից որեւէ մեկը գերակա չէ մյուսի նկատմամբ:**

**Հ. Ա.**

## Կորել է

Նաիրա Մարտունի Փինաջյանի դիպլոմը՝ N006008, տրված Երեւանի բժշկական ինստիտուտի կողմից՝ 27.06.1985 թ.: Համարել անվավեր:




## Թողարկվել է «Արոսենի հայաստանյան» նոր հուշադրամ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել 1000 դրամ անվանական արժեքով «Արոսենի հայաստանյան» արծաթե հուշադրամը: Հուշադրամը թողարկվել է «Ծաղիկների գեղեցկությունը» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում:

Հուշադրամի դիմերեսի դաշտին պատկերված են աջում արոսենու ծաղիկները, իսկ կենտրոնում պտուղները: Պատկերից ներքեւ երկու տողով հորիզոնական նշված է անվանական արժեքը համապատասխանաբար՝ «1000» եւ «ԴՐԱՄ»: Դաշտում նաեւ առկա են ոճավորված պատկերներ: Աջում եզրաշուրթի մոտ մանր տառատեսակով հորիզոնական նշված է թողարկման տարեթիվը՝ «2011»: Եզրաշուրթի շրջագծով վերեւում հայերեն, իսկ ներքեւում անգլերեն մակագրված են համապատասխանաբար՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» եւ «REPUBLIC OF ARMENIA»:

Հուշադրամի դարձերեսի դաշտում պատկերված են արոսենու ծաղիկները, տերեւները եւ պտուղները: Դաշտի ներքեւի աջում մանր տառատեսակով նշված է հուշադրամի մետաղի եւ հարգի պայմանական գրառումը՝ «Ag 925»: Եզրաշուրթի շրջագծով վերեւում հայերեն, իսկ ներքեւում լատիներեն մակագրված են համապատասխանաբար՝ «ԱՐՈՍԵՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ» եւ «Sorbus hajastana»:

Հուշադրամը շրջանագծով երկու կողմից ունի ուռուցիկ եզրաշուրթ:

Հուշադրամի պատրաստման ժամանակ օգտագործվել են գունավոր ներկեր:

Ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը: Հուշադրամը հատվել է «Մայեր» դրամահատարանում (Գերմանիա):

### Հուշադրամի բնութագիրը.

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը եւ հարգը | արծաթ, 9250 |
| Զանգվածը | 28,28 գ |
| Տրամագիծը | 38,61 մմ |
| Որակը | պրուֆ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Տպաքանակը | մինչեւ 10000 հատ |




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 11.3.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: